



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





Lkn

---

2028



803

9

11  
12



Ի զորս և. Երկրաբան

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

1999

ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ

որ Է


ԱՊՐԱՏՈՒՆԻԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ԱՆՅՐԱԲԱԳՐԱԲԵՐ

Торговая П. Смирновой

«ДЕНЬ-ДЕНЬ»

И. С. Смирнова

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



ԻԹԷՈՂՈՍԻԱ.

ԻՏսրաբանի Խաշիպեան Ուսուցնարանի ազգիս Հայոց

1863 = ԹՅԺԲ.



Handwritten signature or scribble in the bottom right corner.

№ 191



Գ 2028. 60


Հ/Բ 2039

---


ՀՐԱՄԱՆԱԻ ԳՐԱԳՆՆՈՒԹԵԱՆ. Իթեղոսիա, Խ21 Նոյեմբ. 1862.



ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ








Պատեցէք մանկանցդ զեր-  
 քեմնի փառսն եւ զայժ-  
 մեան հանգաւանս հայ-  
 րենեաց ձերոց, զի մասադ  
 սիրս lingua զուարնացեալ եւ զգաժեալ  
 միանգաւանցն զեղեցիկ եւ սխուր յի-  
 շասալօք՝ զիսացեն թէ զինչ ունին  
 առնել նմա իսպարտոց իրեանց եւ յի-  
 րաւանց ժառանգութեան:

ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՌՆՈՐԵԱՆ.



## ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ



ՅԱՌԱՋԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ .



ախնի Հայկազանց շինուածոց  
նուիրական մնացորդները՝ որ  
մինչեւ ցայժմ իւրեանց հնու-  
թեամբը պատմութեան նիւթ  
դարձած են նաեւ Եւրոպացւոց  
մէջ, հարկ չէ ասել որ մեր  
հայրենասէր եղբարք Էւս առա-  
ւել սիրով ընդունել են միշտ  
այն ամենայն գրուածքներն որ կվերաբերին  
մեր նախնեաց ձեռքովը շինուած մեծագործ  
ու բաղմամարդ քաղաքներուն, եւ այժմ՝  
թէպէտ ըստ մեծի մասին աւերակ, բայց յի-  
շատակաց արժանի երկիրներուն վերայ :



Յիշատակաց արժանի երկիր կասեմք իրաւամբ մեր պանծալի Հայաստան աշխարհին . վասն զի ո՞ր Հայու սիրտը մագնիսական զօրութեանէն աւելի սաստիկ փափաքանօք չըձգտիր դէպի այն նուիրական երկիրը՝ յորում կերելի ամպաբերձ Մասիսը, — այն մարդկութեան երկրորդ խանձարուրքը, ուստի ութ անձինք իջանելով՝ բոլոր երկիրս բազմամարդ արին: — Ո՞ր Հայու սրտէն արտասուաց աղբիւրներ չէն բղխեր արդեօք, երբ միտքը բերէ Հայաստանի հոյակապ քաղաքներուն աւերակները, նորա անմատոյց լեռնադադաթ բերդերը, նորա հաստակաւոյց կամարակապ կամուրջները, սանդխաւոր ջրհորները, գետնափոր ջրանցքները, անհամար եկեղեցիները, վանքերն ու մատուռները (Տես Տեսարանի Հայաստանի, պատկեր Ա, Բ, Գ, Դ):

Այս մեր ցանկալի աշխարհին սրբազնագոյն քաղաքներէն մէկն է Ա.Ն.Ի, Բագրատունեաց թագաւորութեան մայրաքաղաքը, — Հայաստանի աւերակաց ամենէն սիրելին ու տխրալին, — որ հինգ հարիւր տարիէն աւե-



լի է իւր կիսակործան աշտարակներովն ու  
արձանագրութեամբքը վկայ մնացած է Հայ-  
ոց հղօր թագաւորութեանն ու գեղարուեստ  
ճարտարութեանը. եւ որոյ մանրամասն ստու-  
րագրութիւնը կտեսնեմք ըստ տեղւոյն :

Հայաստանի կողմերը քառասուն տարիէ  
իվեր եւրոպացիք նորանոր ճանապարհորդու-  
թիւններ անելով՝ կղարմանան նորա նախնի  
անուններովը հնացած ու մնացած քաղաքնե-  
րուն ու գիւղերուն վերայ, նորա երկնաճեմ  
լեռներուն, բիւրեղանման ժայռերուն, եղե-  
մական քառալտակ գետերուն, քաղցր եւ  
աղի ծովանման լճերուն, անթիւ առուակնե-  
րուն, ականակիտ աղբիւրներուն, ջերմ եւ  
ցուրտ հանքային ջրերուն, մեծաշառաչ քա-  
րավէժ հոսանքներուն, հրահալելեաց հան-  
քերուն, գեղեցիկ հովիտներուն, ամենաբոյս  
դաշտերուն, սրտաւէտ անգաստաններուն ու  
այգիներուն, եւ անուշահոտ ծաղիկներուն  
վերայ :

Հայաստանի 190 դաւառներէն մէկն էր  
Շիրակի դաւառը, զոր Քրիստոսի 521 թուա-



կանին մեր Տրդատ թագաւորը Կաւսար անունով իշխանին տուաւ (¹) :

Երբոր Արշակունեաց հզօր թագաւորութիւնը Քրիստոսի 428 թուականին վերջացաւ, Հայաստանը աշնան տերեւաթափ ծառի մի պէս կողոպտուեցաւ իւր նախնի փառքէն ու հարստութենէն. եւ երբ թշնամեաց բռնութենէն վերջին յուսահատութեան հասաւ, Աշոտ եւ Շապուհ իշխանազուն եղբայրները, որ Սմբատ Բագրատունի անունով մեծ իշխանին որդիքն էին, թէ իւրեանց ազգասիրութենէն դրդեալ եւ թէ անիրաւ բռնաւորաց անդթութիւններէն ստիպեալ, բոլոր Հայերը ոտքի հանելով՝ քաջութեամբ պատերազմեցան ու յաղթեցին իւրեանց աշխարհի կեղեքիչ բռնաւորներուն :

Սմբատայ որդիքը այն միաբանական յաղթութենէն յետոյ, տեղւոյն յարմարութեանը նայելով՝ Շիրակ գաւառը Կաւսարաւիսն իշխաններէն գնեցին, եւ Աշոտ՝ որ եւ Մասիկեր

(¹) Խորենացի, Գիրք Բ, Գլուխ Դ:



կասուէր, Շիրակայ մէջ եղած Անի բերդը առաջինէն աւելի մեծ ու ամուր շինելով՝ իւր ընտանիքը Քրիստոսի 785 թուականին այն տեղը բնակեցոյց, որով եւ Անի բերդը մայրաքաղաք ասուեցաւ :

Այնուհետեւ Անին՝ նախ իւր արթուն կառավարչին հեռատեսութեամբը <sup>(1)</sup>, եւ երկրորդ՝ միաբան իշխանաց հոգաբարձութեամբը, — որ մեծագործ պալատներ, փառաւոր եկեղեցիներ, հոյակապ վանքեր եւ ուրիշ շատ երեւելի շէնքեր ու վաճառանոցներ շինե-

(1) Այս Սշոտին գովասանքը այսպիսի խօսքերով կուտայ Յովնաննէս Կարուղիկոսը՝ որ ականատես էր անձամբ նորա մարմնոյն կատարելութեանն ու խելացի կառավարութեանը . ,, Ի տիս հասեալ միջակութեան՝ քաջահասակ ,, էր նա, եւ անձնեայ եւ բիկնաւեա եւ զուարթերես եւ ,, մրայօն . նկարէն իմն եւ նիշ արեան յաջս ունելով, որ ,, պէս գյակինք կարմիր ի մեջ մարգարտի ծագեալ . եւ ,, վայելչացեալ զեղեցկութեանն այեօք . մեծիմաստ եւ քաղ- ,, ցրարան . եւ առ կերակուրս խրախճանաց զգաստ . ոչ ,, խանդացեալ նորա ընդ լաւագոյնսն, եւ ոչ արհամար- ,, հեալ զնուաստագոյնսն, այլ հասարակաց ի վերայ տա- ,, րածէր զզգեստ խնամոց իւրոց, եւ լծակօք իմն կշուէր ,, նախ զիւր, եւ ապա զամենեցուն կենցաղս . միանգամայն



ցին, — այնպէս հետ զհետէ ծաղկեցաւ որ  
Աշոտ Գ-ին օրերը Ասիոյ բարգաւաճ ու ա-  
նուանի քաղաքներէն մէկն եղաւ, ինչպէս որ  
կաթամէ Շնորհալին Եգեսիոյ ողբին մէջ :

Բազրատունեաց թագաւորութիւնը տասն  
եւ վեց թագաւորներ ունեցաւ, եւ Քրիստո-  
սի 856 թուականէն մինչեւ վերջին Գագիկ  
թագաւորի օրերը, այսինքն մինչեւ 1080 թ.  
երկարեց, որ է ընդ ամենայն 224 տարի :  
Այն թագաւորաց մանրամասն պատմութիւ-  
նը մեր նպատակէն դուրս լինելով՝ սկսիմք

---

», իսկ ասել, եթէ որ ինչ ի մարդկութեանս է պիտանի՝ ոչ-  
», ինչ կասեցուցանէր . . . Գրեթէ ամենեցուն քան զնա նա-  
», խազունիցն ճանաչիւր . վասն զի ընկալեալ զմեծարանս՝ ի  
», րաց արհամարհէր զանարգանս, եւ միշտ ի նրանանգս  
», բարեոյ կրթութեան զինքն վարժէր, եւ բարի ազդումն  
», իւրոյ ոգւոյն տայր . ընդ ամենեսեան կալեալ սերտ սեր,  
», ոչ ի հակառակութիւնս ինչ կամ ի կռիւս ընդ բշնամիսն  
», մաքառեալ, քան թէ բարեզգեաց բանիւք եւ բարի օճա-  
», նաւ զնոսա ամել յօղորթիւն եւ ի կամս իւր . իսկ ըզ-  
», պաճարանս սնտի շահուց վնաս իւր վարկեալ, եւ ա-  
», ռատաձեռն առ ամենեսեան գտեալ՝ յինքն զբազմաց միտս  
», յանգուցանէր սիրալիր սրտիւ . որպէս զի յայսմ սակի ա-  
», մենեքեան իսկ նմա հաճեալ հաւանեալ էին “ :



միայն Բագրատունեաց մայրաքաղաքին ստորագրութիւնը, որ ինչպէս կյուսամք՝ թէ իւր սրբազան մնացորդաց յիշատակութիւներովը եւ թէ հին եւ նոր պատմչաց կամ ճանապարհորդաց (¹) ստորագրութիւններովը հետաքրքրական եւ միանգամայն ախորժեւի լինի հայրենասէր ազգայնոց :

(¹) Այս համառօտ երկասիրութիւնը գրելու ժամանակ՝ ընտրեցինք նախ՝ իբրեւ ստոյգ աղբիւր՝ ազգային պատմիչները, այսինքն ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ՎԱՐԴԱՆԱՅ ԲԱՐՉՐԵՐԵՏԻՈՅ, ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱՍՈՂԿԱՅ, ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՏԻՈՅ ԵՒ ԿԻՐԱԿՈՍԻ ԳԱՆՉԱԿԵՏԻՈՅ բողած ստորագրութիւնները. եւ ապա իբրեւ ապացոյց նոցա ասուրեանը, կամ իբրեւ արդի ստորագրութիւն հնոյն Անուոյ, մեր աչաց առաջեւը ունեցանք ՔԷՐ-ՓՈՐԹԵՒ, ՄՈՒՐԱՎԵՑՎԻ, ԱՐԲՈԹԻ, ԽԱՆԻԿՈՎԻ, ԲՈԾՍՍԷՒ, եւ ուրիշ եւրոպացի ճանապարհորդաց հին եւ նոր ստորագրութիւնները, որպէս զի մինչեւ ցայժմ կտոր կտոր զրուած ազգային եւ օտար տեղեկութիւնները՝ աւելի յստակ ոճով եւ ճիշդ տեղեկութիւններով ու նորանոր կարծիքներով ընծայեմք մեր հայրենակարօտ եղբարց :








LURIE. 4



ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ



ԱՆՈՅ ԴԻՐՔԸ.

**Ա**նին՝ որ Բագրատունեաց մայրաքաղաքն է, Հայկազանց թագաւորութեան ժամանակներէն անուանի Շիրակ գաւառին հիւսիսային կողմը շինուած է, եւ քսան մղոնի չափ կամ երկու երեք ժամուան ճանապարհաւ հեռի է Կարս քաղաքէն, եւ հին Ախուրեան կամ այժմու Արփաչայ ասուած գետին աջ կողմը կընկնի: Բուն քաղաքին գիրքը կամ նախագիծը արեւմըտքէն հարաւ մէկ վերսք կամ 1500 կանգուն երկայնութիւն ունի, եւ նորա կիսովը լայ-



նութիւն: Նորա արեւելեան կողմը կտեսնուին մեծամեծ քարաժայռեր՝ ձորի նման խոր ձեւացած. հարաւային կողմը Խորաձորը, յորմէ զարհուրելի շառաչմունքներով կանցնի Ախուրեան գետը. արեւմտեան կողմը այն երբեմն մշակուած տեղերը, որ Չոր Ծաղկոցաց կամ Ծաղկոցաձոր կասուի. եւ հիւսիսային կողմը տափարակ դաշտագետին մի, յորում հըզօր պարիսպներով պատած ու ամրացած է Անի քաղաքին հիւսիսային կողմի եռանկիւնը:

Այն եւրոպացի ճանապարհորդները, որ քսանեւհինգ տարիէ իվեր մեր հայրենիքը կերթան քննելու, ընդհանրապէս Անի քաղաքին աւերակներուն համար կասեն թէ կովկասեան լեռանց ետեւը գտնուող ուրիշ հին քաղաքներուն շինուածոցը պէս՝ ժամանակին մանգաղովը դեռ բոլորովին չեն հընձուած. եւ մնացորդներուն վերայ հետագայ տեղեկութիւնները կուտան, որ հին պատմութիւններէն եւս կհաստատուի:



## ԱՆԻՈՅ ՊԱՐԻՍՊՆԵՐՆ ՈՒ ԴՌՆԵՐԸ .

« Երբոր հիւսիսային կողմէն կմօտենայի  
 « Անի քաղաքի կիսակործան պարիսպներուն ,  
 « կասէ Ռոբէրտ Քէր-Փոթր անգղիացի ճա-  
 « նապարհորդը , ամենէն առաջ երեք դուռը  
 « տեսայ , որոց մէջ ջտեղինին վերայ ընձառիւծ  
 « կամ առիւծ մի քանդակուած էր , եւ նորա  
 « մերձակայ աշտարակներուն վերայ մեծ մեծ  
 « խաչեր կային ճարտար կերպով փորագր-  
 « րուած » : — Այս անգղիացի ճանապարհորդին  
 տեսած պարիսպը՝ անշուշտ Աշոտ Գ-ի որ-  
 դւոյն Սմբատ Տիեզերակաշի թագաւորութեան  
 ժամանակին շինածն է՝ 980 թուականին :  
 Պատմութիւնը կաւանդէ թէ Աշոտ Գ-ի որ-  
 դին Սմբատ Բ , իւր հօրը արած բարեկար-  
 գութեանցը հետեւելով՝ իրեն մեծագործ յի-  
 շատակ մի թողելու համար , թագաւորու-  
 թեանը երկրորդ տարին , այսինքն 979 թուա-  
 կանին , հօրը շինած պարսպէն դուրս կրկին  
 պարիսպ մի շինեց՝ լայն , բարձր ու ընդար-  
 ձակ , որ քաղաքին հիւսիսային-արեւելեան



անկիւնէն՝ այսինքն Ախուրեան գետէն սկսելով՝ մինչեւ Մաղկոցաձորը կհասնէր, ուր եւ կերեւի մինչեւ ցայսօր: Այս պարիսպը ներքնապարսպէն 150 տաք հեռաւորութիւն ունի: Աշտարակներուն շատը բոլորածեւ շինուած են, մնացեալները քառակուսի եւ բազմանկիւն, միայարկ, կրկնայարկ կամ եռայարկ, եւ բազմատեսակ արձանագրութեամբք զարուած, եւ շինութիւնը 8 տարուան մէջ աւարտուել է: Սմբատ Բ, այս պարիսպը շինուելէն յետոյ Ալազանի սեպացեալ ամուռներէն մինչեւ Արփաչայի եղերքին ուղիղ գէտ իվեր ելած ժայռերը՝ խոր ու լայն խրամ մի փորել տուաւ որ պատեց քարաշէն ու աղիւսագործ պատերով, ու քաղաքին տկար մասն եւս անմատչելի արաւ: «Դեռ այն խրամին հետքը կերեւի» կասէ Պ. Մուրավեօվ:

Ներքնապարիսպը, ինչպէս ասացինք, Սմբատայ հօրը, այսինքն Աբաս թագաւորին որդւոյն՝ Աշոտ Գ-ին շինածն է, որ ամրացուցել էր մեծագործ աշտարակներով ու զարմանաշէն բուրդերով, ինչպէս նաեւ իւրա-



161  
 քան չիւր բուրգերը զարդարել էր հոյակապ  
 եկեղեցիներով, ըստ ասելոյն վարդանայ. «Ըզ-  
 փոքր պարիսպ քաղաքին Անւոյ շինեաց (Աշոտ),  
 եւ զամենայն բրգունան եկեղեցիս յօրինեաց»:  
 Եւ սակայն Սմբատայ պարիսպը իւր ընդար-  
 ձակութենէն զատ՝ մեծ տարբերութիւն ու-  
 նեցել է հին պարսպէն, այսինքն Աշոտ Գ-ին  
 շինածէն, թէ իւր մեծութեամբն ու մահար-  
 ձաններովը, եւ թէ բարձրագագաթ բուր-  
 գերովն ու ամրաշէն դռներովը, ինչպէս կա-  
 սէ Ստողիկ. «Պարսպափակ առնէ (Սմբատ)  
 «զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մին-  
 «չեւ ցԶորն Ծաղկոցաց՝ կրով եւ վիմով մա-  
 «ծուցեալ, մահարձանօք եւ աշտարակօք բըր-  
 «գացն բարձրաբերձ պարսպեալ, բացագոյն  
 «քան զհին պարիսպն յընդարձակութիւն քա-  
 «ղաքին, եւ մայրագերան դրամբք երկաթա-  
 «գամ՝ հաստահեղոյս՝ բեւեռապինդ ամրա-  
 «ցուցեալ»: Իսկ Պ. Խանիկովը, որ 1848-ին յԱ-  
 նի ճանապարհորդեց, այն պարսպին վերայ  
 մասնաւոր բան չգրեր, եւ միայն գրանը հա-  
 մար այսպէս կասէ. «Անւոյ գրտի պարսպին



վերայ նշանաւոր բան չկայ. իսկ երկրորդ պարսպին գուռը գեղեցիկ է ու հայերէն երկայն արձանագրութեամբք զարդարուած » : Քէր-Փորթրի եւ Պարոն Խանիկովի խօսքերուն նայելով, կերեւի թէ Սմբատ Բ-ին շինած գրսի պարսպին գրան շքեղութիւնն եւս ժամանակին հետ անհետացել է :

ԱՆԻՈՅ ՏԵՍԱՐԱՆԸ .

« Քաղաք մտնելուդ պէս — կասէ նոյն ան-  
 « գղիացի ճանապարհորդը — տխուր տեսա-  
 « բան մի կտեսնես առաջեւդ՝ խոշոր քարերով,  
 « սիւներու գլուխներով, եւ եկեղեցեաց բազ-  
 « մաքանդակ շքեղութեան ուրիշ մնացորդաց  
 « աւերակներովը լցուած . բայց փոքր մի յա-  
 « ռաջ գնացած իդ պէս՝ քանի մի եկեղեցիներ  
 « եւս կապտասհին որ դեռ անխախտ կեցած են,  
 « եւ նոցա աւերակ ասելը գրեթէ անվայել է » :

ԿԱԹՈՒՂՈՒԿ ԵՒ ԵԿԵՂԵՅԻՆ .

Անուոյ եկեղեցիներուն վերայ ուրիշ ճանապարհորդներ կապտամեն թէ դարուս սկիզբ-



ները քառասնի չափ միայն մնացած են եղել, եւ այժմ ինոցանէ հազիւ թէ տասնեւհինգ հատ կտեսնուին, յորոց մէկն ու առաջինն է քաղաքին արեւելեան - հարաւային կողմը շինուած մեծ ու շքեղ Կաթողիկէ Մայր եկեղեցին, զոր եւ Պ. Մուրավեով իւր « Ճանապարհորդութիւն ի վրաստան եւ ի Հայաստան » վերնագրով գրքին մէջ կատորագրէ ասելով. « Անի քաղաքին գիմացը բլրի մի վերայ հաստատուած Խազախաց բնակելու տեղէն <sup>(1)</sup>,

(1) Անի քաղաքէն մեկ ժամու չափ ճանապարհի հեռաւորութեամբ անուանի գիւղ մի կայ Հռոմուսի վանք կամ ԽօջաՎանք անունով, եւ նորա հանդիպահայեաց լեռնակներէն մեկուն վերան է Պ. Մուրավեովի ասած Խազախաց բնակարանը: — Սորա մեջն է Յովհաննէս Թադաւորի 1038 թուականին շինած մեծ ու փառաւոր եկեղեցին, որ մեր պատմիչները գեղեցկութեանն ու ճարտարութեանը կողմանէ հաւասար կղասեն Անույ Կաթողիկէ եկեղեցւոյն: Սորա գաւիթը եկեղեցիէն բաժանած, ու մեծագործ սիւներով բարձրացած է կամարակապ ձեղունը, առանձին գրմբերով: Նոյնպէս անուանի է 1209-ին շինուած Նշխարատունը իւր երեք քարաշէն սենեակներովը, որոց մեջ նուրբ ու գեղեցիկ ճարտարութեամբ փորագրուած արձանագիրներ կան, եւ զոր երկար կհամարիմք այս տեղս յիշատակելը:



« Բաղրատունեաց հին մայրաքաղաքը իւր բո-  
 « լոր տեսարանաց զեղեցկու թեամբը երեւե-  
 « ցաւ մեր աչաց առաջեւը : Կարելի չէ հա-  
 « լատալ թէ Անին յիրաւի անմարդ՝ ան-  
 « բնակ է . վասն զի կարծես թէ քաղաքին մէջ-  
 « տեղի հոյակապ Մայր եկեղեցին՝ որ ուրիշ  
 « շէնքերէն շատ բարձր է , դռները պիտի  
 « բանայ որ խուռն բաղմու թիւնը ներս մանէ » :  
 Այս հոյակապ ու ընդարձակ եկեղեցւոյն  
 հիմը դրաւ Աշոտ Գ-ի որդին Սմբատ Տիեզե-  
 րակալ՝ Տրդատ անուսով Հայ ճարտարապետին  
 ձեռքովը 989 թուականին : Նորա դրսի եր-  
 կայնութիւնը 110, եւ լայնութիւնը 72 ոտք  
 է , բոլորովին սրբատաշ թուխ ու դեղին քա-  
 րերով շինուած , եւ այնպէս մէկմէկու անցու-  
 ցած՝ որ միակտուր քարի կնամանի : Զորս կող-  
 մէն հինգ աստիճան ունի , նոյնպէս սրբատաշ  
 քարէ՝ մէկ ստնաչափ լայնութեամբ :

ԲԻՒՐԵՂԵԱՅ ԶԱՀԸ. — ԿԱԹՈՒՂՈՒԿԵՒՆ ՄԵԾ ԽԱԶԸ .

Յատակագծին վերայ չորս սիւն կերեւի  
 խաչաձեւ խարխսխներով , գոյնզգոյն քա-



րանց հատորներով ու բազմանկիւնի կողմե-  
 րով շինուած, որոց վերայ հաստատուած են  
 եկեղեցւոյն մեծամեծ կամարները, եւ սոցա  
 վերայ բարձրացած է հրաշակառոյց պատած  
 դմբէթը, յորմէ կախուած է եղել Սմբատ  
 թագաւորին Հնդկաստանէն բերել տուած  
 բիւրեղեայ ջահը, որ 1046 թուականին Պար-  
 սից Արիաստան թագաւորին Անի մտած ժամա-  
 նակին պարսիկ զինուորի մի ձեռքով, որ ան-  
 զգուշութեամբ ուղեւէր դմբէթէն վար առ-  
 նուլ, գետին ընկաւ ու փշրեցաւ. ընդ որ եւ  
 արտմեցաւ Ալիասլան: Իսկ դմբէթին վերայ  
 եղել է արծաթեայ խաչ մի մարդաչափ,  
 պահապան քաղաքին: — Այն մեծաձեւ խաչը  
 այնքան յարդի եղած է Անեցւոց մէջ, որ  
 երբ 1126 թուականին Վրացւոց Գեօրգի թա-  
 գաւորը (որոյ իշխանութեան տակն էր այն  
 ժամանակ Անին) ամբողջ տարի մի Ազուլ-  
 սուարի որդւոյն Փասրուն Բ-ին դէմ պատե-  
 րազմեցաւ, դեռ կռիւը չվերջացած, առա-  
 ջարկեց Փատլուն որ քաղաքը իրեն տան, ու  
 իբրեւ հայրենի ժառանգութիւն խաղաղու-



թեամբ պահէ. եւ երբ Դեմեոսը թագաւորը  
 Անին տալու դաշանց վերայ կմտածէր, Հայ  
 իշխանաց խնդրանօքը խօսք առաւ Փատլուն  
 Բէն որ նախ՝ քաղաքին մէջը բնակող քրիս-  
 տոնէից նեղութիւն չտայ, եւ երկրորդ՝ Մայր  
 եկեղեցւոյն գմբեթին մեծ խաչը վար չառ-  
 նու: Փատլուն ընդունելով նոցա խնդիրը,  
 թէպէտ եւ ամենեւին վնաս չարաւ քաղա-  
 քին կամ քաղաքացւոց, բայց նորա պահան-  
 ջած անտանելի հարկը, որ օրէ օր զժողո-  
 վուրդը վերջին աղքատութեան կհասցընէր  
 նոյն իսկ խաղաղութեան ժամանակին, բոլո-  
 րովին քամեց նոցա նիւթական ոյժը, եւ վեր-  
 ջին տառապանաց մէջ ձգեց ժողովուրդը,  
 ինչպէս որ ցաւելով կպատմէ Սաւուել Անե-  
 ցի ժամանակակից մատենագիրը. «Ի սորա  
 «(Փատլունի) իշխանութեան թէպէտեւ խա-  
 «ղաղանայր աշխարհս ի սովորական հինից,  
 «այլ յաղագս նախնի հարկապահանջ յափըշ-  
 «տակութեանց՝ եկն եհաս ի վերայ մեր աղ-  
 «քատութիւն եւ տառապանք անհնարին. որ  
 «յառաջագոյն ժամանակօք ունէր զաշխարհս



« Հայոց, եւ աստանօր յաւելլաւ յաճախապէս  
 « մի ընդ միոյ մինչեւ յաւուրս յայտասիկ,  
 « յորում եմքս . . . եւ պակասեցան յունայնու-  
 « թեան աւուրք մեր . . . » :

ԿԱՌՈՒՑՈՂ, ԿԱԹՈՒՂԻԿԷՒՆ. — ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

Երեք դուռ ունի եկեղեցին, երկուքը հիւ-  
 սիսէն ու հարաւէն, երրորդը մէջ տեղէն,  
 որ է արեւմտեան կողմը: Սոցա մէկուն՝ այս-  
 ինքն հարաւային դրան վերայ արձանագիր  
 կայ իյիշատակ Կատրամիդէ թագուհւոյն <sup>(1)</sup>  
 Գագկայ Առաջնոյ՝ աւարատղի շինութեան  
 նորին, եւ Սարգսի Կաթուղիկոսին, զոր Պ.

(1) Պ. Խանիկովը իւր ճանապարհորդութեան մեջ գլատրամիդէ թագուհին վրացի կանուանէ ասելով. ,, Գնացինք Անուոյ հոյակապ Մայր եկեղեցին, որ Գագիկ թագաւորին եւ նորա վրացի ամուսնոյն հրամանաւը շինուած է. . . «: Զգիտեմք՝ սխալմամբ արդեօք թէ գիտութեամբ զրած է Կատրամիդէ թագուհւոյն վրացի լինելը. բայց մեք ուրիշ զրուածքները մեկզի բողջով, բաւականանամք միայն Ստեփանոսի Ասողկայ խօսքերը մեջ բերել, որ կասէ թէ ,, Կատրամիդէ ,, թագուհի Գագկայ Առաջնոյ, բարեպաշտուհի եղեալ, որ էր



*Բռօսսէի վիմատիպ արձանագրութենէն առ-  
նելով՝ կգնեմք այս տեղ .*

† Ի նժ թ. ՀԱՅՈՑ † ՄԺԹ թ. ՀՈՌՈՄՈՅ Շ (1). ԱՄԻ ՂԲ.  
† || Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱՍՏՈՒԾԱՊԱՏԻԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ՝ ՏԵԱՌՆ ՍԱՐ-  
ԳՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԵՒ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐՈՒ-  
ԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ԵՍ ԿԱՏՐԱՄԻԴԷ  
ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱՅ ՍԻՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ,  
ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՊԱԻՆԵՅԱՅ, ԵՒ ՀՐԱՄԱՆԱԻ  
ԱՌՆ ԻՄՈՅ ԳԱԳԿԱՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ ՇԻՆԵՅԻ ՉՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻ-  
ԿԷՍ, ՉՈՐ ԷՐ ՀԻՄՆԱԴՐԵԱԼ ՄԵԾԻՆ ՍՄԲԱՏԱՅ, ԵՒ ԿԱՆԳՆԵ-  
ՑԱՔ ՏՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐՈԳ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ ԾՆՈՒՆԴ ՀՈԳԵՒՈՐ  
ԵՒ ԱՐՉԱՆ ՄՇՏՆՉԵՆԱԻՈՐ ՉԱՐԴԱՐԵՅԻ ՉԱՐԴԻԻՔ ՊԱՏՈՒԱԿԱ-  
ՆԱԻՔ, ՆՈՒԷՐՔ ԻՆՉ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՉԱՐՄԻՅ ԻՄ ԵՒ ՈՐԳԻՈՅ  
ՍՄԲԱՏԱՅ, ԱՐԱՍԱՅ ԵՒ ԱՇՈՏՈՅ : † ՀՐԱՄԱՅԵԱԼ ԵՄ ԵՍ ՏԷՐ  
ՍԱՐԳԻՍ ՍՊԱՍԱՒՈՐԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅՍ՝ ՅԵՏ ԵԼԻՅ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱ-  
ԳՈՒՀԻՈՅՍ ՉՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՅԻՍՆԵԱԿ ՄԻՈՎ, ՔԱՌԱՍՆԻԻ ԿԱՏԱ-  
ՐԵԼ ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՉԵԻ ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵԹԷ ՈՔ ՉԱՐ-  
ՉԱՆԱԳՐԵԱԼԴ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԷ, ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ԵՂԻՅԻ Ի ՔՐԻՍ-  
ՏՈՍԷ. Ի ՎԵՅ Ռ ՆԼ ԵՒ Գ ԱՄԱՅ ԱԴԱՄԱՅ ԵՒ Ռ ԵՒ ԺԲ ԱՄԻ  
ՄԱՐՄՆԱՆԱԼՈՅ ԱՍՏՈՒԾՈՅՆ ԲԱՆԻ — ՉՐԺ ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈՅ Ի  
ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅՈՑ, ԳՐԵՑԱԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ Ի ՉԵՌՆ ԻՄ ԲՆԻԿ :

„ դուստր վասակայ Սիւնեաց իշխանիև, շինեաց զնիմ-  
„ նարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչու-  
„ բեամբ, բարձրաբերձ կամարօք զմբերաւորեալ խորան  
„ երկնանման . եւ զարդարեաց իզարդ ծիրանեծաղիկ ոսկե-

(1) Թեքեւս Նրչանիև :



*Արձանագրին ձախակողմը կտեսնուի արե-  
լացոյց ժամացոյց մի հայերէն տառերով ժա-  
մի բաժանուած : Իսկ աջակողմը եկեղեցւոյն  
դրսի հինգ աստիճանաց (էջ 20) վերանորո-  
գութեան արձանագիրս կկարդացուի .*

† || Ի ԹՎԻՆ ՈՒՐ. ԿԱՄԱԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՏԻԳՐԱՆ ԽԱՌԱՅ  
ՔՐԻՍՏՈՍԻ, ՇԻՆԵՅԻ ՀԱԼԱԿ ԸՆԶԻՒՔ ԻՄՈՎՔ ԶԱՍՏԻՃԱՆՆԵՐՍ  
ՄԵԾԱՓԱՌ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷՍ, ԶՈՐ ԲԱԶՈՒՄ ԱՄԱՅ ՀԵՏԷ  
ԽԱՐԽԱԼԵԱԿ ԷՐ, ԵՒ ԵՏՈՒ ՆՈՒԷՐՔ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻԿԷՍ ԶԻՄ  
ԳԱՆԶԱԳԻՆ ԿՈՒՂՊԱԿՆ ՈՐ Ի ԿԱՏԱՆՈՅԻՆ ԵՒ ԵՏՈՒ ԵՐԿՈՒ ՏԱԻ-  
ՆԱԿԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՄԻՆ, ԵՒ ԵՐԿՈՒ ՍԿԻ ԱՐԾԱԹԻՔ  
ԱԻԱԳ ԽՈՐԱՆԻՆ, ԵՒ ԵՒԻ ԼՈՒԾ Ի ՎԵՐԱՅ ՍՊԱՍԱԻՈՐԱՅՍ ՈՐ  
ԱՌՐ ՄԻ ՏԱՐԻՆ ՊԱՏԱՐԱԳԵԱԿ ՅԱՆՈՒՆ ԻՄ ՄԻՆԶԵԻ Ի ԳԱ-  
ԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ :

*Արեւմտեան կողմը եւս այս անթուական  
յիշատակարանս գրուած է .*

† ԿԱՄԱԻՔ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՍ  
ԱՌՈՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՄԵԾԱՐԵԱԿ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱԻՈՐԱՅԻՆ Ի  
ԳԵՂ, ԶԱՐԴՈՒ, ԵՒ Ի ՏԻՄ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՄՈՅ ԵԿԻ ՅԱՐԵԻԵԼՍ

„ թիւ նկարագործ անկուածոց , արժարեղէն եւ ոսկեղէն  
„ անօրոց , եւ բազմապայծառ լուսատու անօրոց վայելչու-  
„ թեամբ , որովք ջանանայր ըստ երկնային կամարին կա-  
„ թուղիկէն սուրբ՝ որ ի քաղաքին Անուոյ՝ եւ այլն :  
„ (Գ. 30) :



Ի ԳԵՂԵՑԿԱՆԷՆ ԲԵՐԴՍ ՅԱՆԻ, ԲԱՐՁՐԱՅՈՒՅԻ ԲՈՎԱՆԴԱԿ ԸԶ-  
 ՊԱՐԻՍՊ ՍՈՐԻՆ ԿԱՐԿԱՌԱԿՈՅՏ ԱՐՁԱՆԱԻՔ ՀԱՍՏԱՀԵՂՈՅՍ ԱՄ-  
 ԲՈՒԹԵԱՄԲ, ԵՒ Ի ՅԻՄՈՅ ՄԵԾԱԾԱԽ ԳԱՆՁՈՒՅ ԱԾԻ ԶԱՆԻԻ  
 ԶՈՒՐ ՅՈՐԴԱԲՈՒԽ Ի ՄԷՋ ԱՄՐՈՅԻՍ ՅՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ԶՈ-  
 ՎԱՅՈՒՄՆ ԾԱՐԱԻԵԱՅ. ԲԵՐԻ ՈՍԿԻ ՄԱՏԱՆԵԱԻ ԳԻՐ ԱԶԱՏՈՒ-  
 ԹԵԱՆ ԶԻՆՔՆԱԿԱԼ ԾԻՐԱՆԱԾԻՆ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՎԱՍՆ ՊԱԽՏԻՑ  
 ՏԱՆՅ ՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՍՏԱԿԻՆ ԶՈՐ ՏԱՆ ԱՄ ՅԱՄԷ ԶԱՓ ՈՒ-  
 ԹԻՑ ԼՏԵՐՅ. ԱՅԼ ԵՒ Ի ԽՆԴՐՈՅ ԻՇԽԱՆԱԻՈՐԱՅՍ ԽԱՓԱՆԵՅԻ ԵՒ  
 ԶԳԻԻՏ ԵՐԿՈՒՅ ԼՏԵՐՅ ԶՈՐ ՏԱՅՐ ՄՈՒԹԱՅԻՐՆ ԶԱՅՍ. ԱՄԷՆ :

*Իսկ ներքին երեւոյթը իւր ամէն մասունք-  
 ներովը, այսինքն գեղեցիկ տասնախորշ խո-  
 րաններովը, աջակողմեան ու ձախակողմեան  
 կրկնայարկ մասունքներովը, քարաշէն ամ-  
 բիոնովը, չորս բազմանկիւն սիւններովն ու  
 բազմաքանգակ խաչերովը անխախտ է մին-  
 չեւ ցայժմ. միայն թէ գմբէթը քսան տա-  
 րի կայ որ կործանուել է (Տես Տեսարանի  
 Հայաստանի, պատկեր Ե) : Այսպէս կվկայէ նա-  
 եւ Պարոն Խանիկովը ասելով թէ « Անւոյ կա-  
 « թուղիկէ Մայր եկեղեցին իւր ընդարձակու-  
 « թեամբն ու ճարտարապետութեանը զուտ  
 « հայկական ոճով լինելովը՝ շատ տարբերու-  
 « թիւն ունի ուրիշ շէնքերէն, պատերուն վե-  
 « րայ եւս նկարներու տեղ բազմատեսակ քան-*



« դակներ կան փորագրուած : Գմբէթը փլած  
 « է . բայց պատերը այնպէս ամուր են որ  
 « մեծ երկրաշարժով անգամ փլչելու վտանգ  
 « չունին » :

ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ . — ՍԱՐԳԻՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ .

Կաթուղիկէին արեւելակողմը կերեւի Սրբոյ  
 Հռիփսիմեանց եկեղեցւոյն աւերակները , ո-  
 թոյ հիմնադիրն է Սարգիս Կաթուղիկոսը ,  
 եւ շինուել է ՆՅՍ. (992) թուականին : — Պատ-  
 մութիւնը կաւանդէ թէ Սարգիս Կաթուղի-  
 կոսը իւր հայրապետութեան օրէն եկեղե-  
 ցեաց պայծառութեան վերայ մեծ հող տա-  
 նելով՝ Հռիփսիմեանց կուսանաց մասունքներ  
 դտաւ . եւ նոցա անունովը հոյակապ ու փա-  
 ռաւոր եկեղեցի մի կանդնեց Կաթուղիկէին  
 մօտ , ինչպէս որ կ'ըլլէ վարդան թէ « Շինեաց  
 « (Սարգիս Կաթուղիկոս) զվկայարան սրբոյ  
 « Հռիփսիմեանցն աւրնթեր Կաթուղիկէին Ա-  
 « նւոյ » եւ փոխեաց անդր զնշխարս նոցա՝ բե-  
 « րեալ մեծաւ հանդիսիւ , եւ կարգեաց զօրն  
 « տօն մեծ » :



ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՈՐԱ ՀԻՄՆԱԴԻՐԸ .

Փոքր ինչ հեռուն՝ Մայր Եկեղեցւոյն աջա-  
կողմը աշտարակի պէս բոլորածեւ Եկեղեցի  
մի կտեսնուի Ս. Փրկիչ կամ Ասեկապիտոսի անու-  
նով, որ Գրիգոր Մագիսարոսի հօրեղբօր Ա-  
պրղիարիպ մարզպանին շինածն է 1056 թը-  
ւականին : Սորա ճարտարապետութիւնը իւր  
հին ու գեղեցիկ ձեւովը՝ սքանչելի օրինակ  
մի է մինչեւ մեր օրերը, որ մարդուս աչքը  
կզմայլի . բոլոր շինուածքը, ինչպէս նաեւ  
գեղեցկածեւ դմբէթը (որ մինչեւ ցայժմ  
ամբողջ կեցած է) մեծամեծ ու սրբատաշ  
քարերով շինուած է : Դրսի կողմէն կանգուն  
մի վերէն տասներկու լայն կամարածեւ կողմ  
կրածանուի, եւ իւրաքանչիւր անկիւնին ե-  
ղբքը քարէ սիւնակներ կան, շինողաց յի-  
շատակին արձանադրութիւններովը : Երկու  
դուռն ունի արեւմտեան ու հարաւային կող-  
մերը . իսկ Եկեղեցւոյն մէջ ութ կիսաբոլոր  
ձեւացած է . նոյնպէս ամէն մէկ անկիւնին  
մէջ մէկ մէկ սիւներ կան մինչեւ Եկեղեցւոյն



ձեղունը ձգուած, եւ այն սիւներուն վերայ  
բարձրագագաթ գմբէթը շինուած է տասն-  
երկու պատուհաններով, որոց իւրաքանչիւ-  
րին միջոցը զարգարուած է սրբոց գեղա-  
նկար պատկերներով: Երկու նեղ ու երկայն  
պատուհաններ եւս ունի պատերուն լայնու-  
թեան մէջ շինուած, այնպէս՝ որ բոլորակին  
ձեւը չէ աւերուած:

Այս եկեղեցին շատ լաւ կատարագրէ Պ.  
Մուրաւեօլ. « Առանձին բարձրաւանդակի մի  
« վերայ — կասէ — բոլորաձեւ եկեղեցի մի տե-  
« սայ գեղեցիկ ճարտարապետութեամբ շի-  
« նուած, որ իւր ամէն մէկ կարգին տասներ-  
« կու կամարակապներովը երուսաղեմի մէջ ե-  
« ղած Օմարի մզկիթը միտքս կբերէր. սորա  
« մէջ գեռ նկարներու մնացորդները կերե-  
« լին: Խորանին եղած տեղը Քրիստոսի Տեառն  
« մերոյ պատկերը կտեսնուի՝ չորս կողմը հը-  
« րեշտակապետներով, միւս խորշերուն մէջ  
« չորս աւետարանիչները եւ սրբոց պատկեր-  
« ներ փորագրուած են, բոլորը հայերէն  
« արձանագրութիւններով: Այն արձանագրու-



« թիւններէն մէկը, որ դրան վերայ փորա-  
 « գրուած է՝ կցուցանէ թէ այն եկեղեցին Պետ-  
 « րոս կաթողիկոսի հայրապետութեան եւ  
 « Գաղկայ թուան Սմբատայ թագաւորու-  
 « թեան ժամանակները շինուած է » : Թէպէտ-  
 եւ Պ. Մուրավեօվի կարծիքը ճշմարիտ է, բայց  
 աւելորդ չեմք համարիր հին յիշատակարա-  
 նէ առնուլ այն արձանագրութեան ճիշդ բո-  
 վանդակութիւնը եւ դնել այս տեղ, որ է այս.

ՅԱՄՍ ԱԱՏՈՒԱԾԱՊԱՏԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ  
 ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱՅ ՈՐԴԻՈՅ  
 ՔԱԳԿԱՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ Ի ՆՁԵ ԹՈՒԱԿԱՆԻՍ (1036), ԵՍ ԱՊԼՂԱ-  
 ՐԻՊ ՄԱՐԶՊԱՆ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԱՅ ԻՇԽԱՆԻ ԵՒ ԹՈՌՆ ԱՊՈՒՂԱՄՐԻ  
 ԵՒ ԵՂԲԱՅՐ ՎԱՀՐԱՄԱՅ ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՓՐԿԻԶՍ Ի ՄԱՅՐԱՔԱ-  
 ՂԱՔԻՍ ՅԱՆԻ, ՇԱՏ ԶԱՆԻԻ ԵՒ ՄԵՄԱԾԱԽ ԳԱՆԶԻԻ, ԵՒ ԳՆԵՑԻ  
 Ի ՀԱՂԱՂ ԸՆԶԻՅ ԻՄՈՅ ԿՈՒՂՊԱԿԱՆԻ Գ, ԵՒ ԶԻԹԱՀԱՆՔ ԵՒ ԱՅ-  
 ԳԻ ԵՒ ՀՈՂԵԱՐ, ԵՒ ԵՏՈՒ ՍՈՒՐԲ ՓՐԿԶԻՍ, ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ  
 ՈՍԿԻՈՎ, ԵՒ ԱՐԾԱԹՈՎ, ԵՒ ԱԿԱՄԲԲ ՊԱՏՈՒԱԿԱՆԱԻՔ, ԵՒ Ե-  
 ՏՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ □ ԵՒ ՏԱՆԱԿԱՆ, ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ  
 ԿՏԱԿԱՐԱՆԱԻՔ :

Սուրբ Փրկչիս ետեւէն, ըստ վկայութեան  
 Պ. Բուօսսէի՝ բարձրաշէն սլարիսպներ կան  
 կարմիր քարերով շինուած, որոց ինչ եղածը  
 յայտնի չէ մեզի :



Այս Փրկիչ եկեղեցւոյն ձեւովը շինուած, Միջնաբերդէն մօտիկ՝ քաղաքին արեւմտեան կողմին վերայ ութանկիւնի փոքրագոյն եկեղեցի մի եւս կայ՝ յատակը 28 քառակուսի ոտնաչափ մեծութեամբ, եւ դմբեթին վերայ 14 պատուհաններ ունի, ներսէն պարզ, եւ դրրսէն զարդարուն կերպով շինուած: Թերեւս այս եկեղեցւոյն համար լինի Պ.Մ ուրավեօվին ասածը թէ « Բագրատունեաց պալատէն իջայ « դէպի փոքրիկ եկեղեցի մի, որոյ պատուհանները բազմարուեստ քանդակներով շրջաջանակներ ունէին, իսկ սիւները կարմիր « ու սեւ քարերով շինուած էին »:

ՄԻՋՆԱՐԵՐԴԸ, ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՊԱԼԱՏԸ.

Քաղաքին հարաւային-արեւմտեան ծայրը՝ Ծաղկոցաձորին ու Ախուրեան գետին մէջ տեղը կտեսնուի Միջնաբերդը՝ բարձր քարափի վերայ մեծ ու փոքր աշտարակներով շինուած, ուր Բագրատունի թագաւորաց փառաւոր պալատին կիսակործան սրահները կգտնուին:



Պարիսպները շատ հաստ են, դիրքը գեղեցիկ ու ահաւորահայեաց, եւ շրջապատը 150 քայլէն աւելի: Հիւսիսային ու արեւմտեան պատերը բարձրացած են ձորի յատակէն՝ քարաժայռի մի վերայէն, եւ առաջնոյն՝ այսինքն հիւսիսային պարսպին վերայ դիւնուորանման մարդու անդլուխ պատկեր մի կայ քանդակուած, որոյ ձեռքին մէջ, ինչպէս որ կաւանդեն, քաղաքին ձեւը բռնած է, իբր թէ Անուոյ անխշխանութեան ժամանակին՝ իւր իշխանաց անհոգութիւնը ցուցանելու համար շինուած: — Ոմանք կասեն թէ այս պատկերին հեղինակը Վեստ Սարգիսն եղած է. վասն զի Գագիկ վերջին թագաւորին կոստանդնուպոլսոյ մէջ դաւաճանութեամբ բանտարկուելէն յետոյ, Վեստ Սարգիս կամենալով թագաւորին տեղն անցնիլ<sup>(1)</sup>,

(1) . . . « Ի տուր գաշխարհն Հայոց, եւ ինքն (Վեստ Սարգիս) լախշտակեալ շատ զանձս բազաւորաց՝ բերդամուտ լինէր, եւ աւանդս բազումս պահէր. եւ կամեր թագաւորել Հայոց, զոր զկամեցան Բագրատունիք »:



ուրիշ բոլոր հնարներէն վերջը այն պատկերին փորագրելը մտածել է, որ ժողովրդոց հասկացընէ թէ Անւոյ զինուորները անգլուխ՝ այսինքն առանց թագաւորի մնացել են, ու ինքը պատրաստ է ժողովուրդը կառավարելու, միայն թէ ընդհանուր կամեցողութեան կսպասէ: — Զարմանալին այս է որ Անի գընացող ճանապարհորդաց շատերը՝ այս անգլուխ զինուորին վերայ յիշատակութիւն չեն արած, եւ միայն Պ. Աբբոթ՝ որ 1837-ին Անի գնաց, իւր «Յիշատակք ուղեւորութեան ի Հայս» վերնագրով յօդուածին մէջ, որ տրւած է 1842-ին Փարիզու Աշխարհագրական Ընկերութեան Օրագրին ժի մասին մէջ, «Չեռքը գնտաձեւ բան մի բռնած մարդոյ պատկեր մի տեսայ» կասէ, եւ այս անորոշ տեղեկութեամբ խօսքը կվերջացնէ:

ԱՆԻՈՅ ԽԱՉԱՐՉԱՆՆԵՐԸ. — ԱԼԱԶԱՆ ԳԵՏԸ.

Պալատին դուռը արեւելեան կողմէն է՝ արաբացի սճով՝ սեւ ու դեղին քարերէ շինուած. սորա վերայ եւս մեծ պատուհան մի



կայ բազմարուեստ քանդակներով ու վայել-  
լուչ խաչարձաններով, ինչպէս նաեւ շատ  
տեղ քաղաքին մէջ (Տես Տեսարանի Հայաս-  
սանի, պատկեր 2, է): Իսկ պալատին վարը մե-  
ծագործ ներքնատուն մի կայ, այնքան մեծ՝  
որ շատերը կարծիք կանեն թէ բովանդակ  
քաղաքին ներքնափորն է: Պ. Մուրավեօվ զար-  
մանալով այն Միջնաբերդին գիւղին վերայ,  
այսպէս կասէ. «Երբ Անւոյ մզկիթէն դէպի  
«Միջնաբերդը գիւմեցի, եւ տեսայ որ մէկ  
«կողմէն միայն կարելի էր այն տեղը եր-  
«թալ, որ այն եւս երկու կողմէն աշտարակ-  
«ներով պահպանուած էր, ասլշած մնացի  
«նորա անմատչելի դրիցը վերայ, բայց աւե-  
«լի եւս զարմացայ, երբ տեսայ որ Արփա-  
«չայի պէս երկու կողմէն ապառաժներով  
«պատած գետ մի եւս Անւոյ պարիսպներուն  
«տակէն կանցնի: — Այն գետն է Արագան, որ  
«սարսափելի արագութեամբ վազելով՝ կու-  
«գայ Արփաչային հետ կիսառնուի Միջնաբեր-  
«դին մօտ, որ սեպացեալ ժայռերէ պատած  
«լինելով՝ անմատչելի է»: Այս տեղ քանի



մի խօսք ասելէն յետոյ կաւելցընէ նոյն ճա-  
 նապարհորդը՝ թէ «Այն լեռնակը՝ որոյ վե-  
 «րայ Միջնաբերդն ու Բագրատունեաց եւ  
 «Անւոյ էմիրներուն պալատները շինուած են  
 «եղել՝ փլատակներով ծածկուած են, այն-  
 «պէս որ այժմ երեք կամարակապ միայն մը-  
 «նացել է. մէջտեղինը երկու կարգ է իրա-  
 «րու վերայ շինուած, իսկ զարդերը Փատ-  
 «լուն Բ-ին մզկիթին զարդերուն պէս են,  
 «գուցէ երկուքն եւս նոյն ճարտարապետի  
 «գործ»:

Այն տխրատեսիլ կամարակապներուն դա-  
 գաթէն՝ Անին բոլոր շինուածքներովն ու  
 դաշտերովը աչքիդ սուաջեւը կպատկերա-  
 նայ, մանաւանդ բարձրաշէն Մայր եկեղե-  
 ցւոյն ճախակողմեան երեւոյթը, որ հանդի-  
 պահայեաց է պալատին: «Այն տեղէն շատ  
 «նայած ժամանակիդ — կասէ ճանապարհոր-  
 «դին մէկը — ուզես չուզես սարսուռ մի կընկ-  
 «նի բոլոր մարմնոյդ վերայ, երբ աչքերդ  
 «դարձընես այն նսեմաստուեր կրճին վե-  
 «րայ՝ ուստի Արփաչայը Ալազան գետոյն



« Ջրերը կլանելէն յետոյ՝ յաղթական կեր-  
 « պով կվաղէ կերթայ » :

Ա. Ի. Ե. Ր. Ա. Կ Պ Ա. Լ. Ա. Տ. Ա. Ն Մ Ն Ա. Յ. Ո. Բ. Գ. Ը.

Այն արքունական ապարանքէն զատ՝ ու-  
 ըիշ մեծաշէն տան աւերակ մի կայ քաղաքին  
 դրսի պարսպին մօտ, Ալազան գետոյն ձախ  
 եզերքը սեպացեալ ժայռի վերայ շինուած  
 ու աւերակներով ծածկուած : Դիմացի կողմը  
 պարսկական ոճով կամ նարտախառի ձեւով  
 շարուած ու մեծամեծ քարերով զարդարուած  
 վինելով, ճանապարհորդաց շատերը կարծիք  
 կանեն թէ իշխանաւորի մի բնակարան եղած  
 պիտի լինի (Steu Steuarrasilf Հայաստանի,  
 պատկեր Ը). Եւ Պ. Մուրավեօվ իւր նախոր-  
 դաց կարծիքը հաստատելով՝ այս խօսքերս  
 կաւելցընէ. « Եթէ ինձ թողուին այն մեծա-  
 « շէն աւերակին որոյ եղածը գուշակել—կա-  
 « սէ—մեծահռչակ Պալհաւունեաց ցեղէն Վախ-  
 « րաւ սպարապետի կամ նորա եղբօրորդւոյն  
 « Գրիգոր Մագիստրոսի սլաւատը կանուանէի.  
 « վասն զի քաղցր է մարդկանց մտքին մէջ



« անմահ մնացած անուններով անկենդան ա-  
 « ւերակները կենդանացնել » :

ԱՐՔՈՒՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ .

Պաշատին ետեւը երեք եկեղեցեաց աւե-  
 րակներ կան . մէկուն կամարակապը՝ որ դէ-  
 ւալի Արփաչայ դետը կնայի , այնքան բարձր  
 է որ ճանապարհորդաց շատերը արքունեաց  
 սեպհական եկեղեցին եղած կկարծեն (Տես  
 Տեսարանի Հայաստանի , պատկեր Ք) :

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ .

Միջնաբերդին հիւսիսային կողմը ծաղկո-  
 ցածորի քարափին մօտ՝ բարձրաւանդակի  
 մի վերայ նոր ու փառաւոր եկեղեցի մի կայ  
 Սուրբ Գրիգոր անուամբ , Գագկայ Առաջնոյն  
 հրամանաւ շինուած : Սորա նախագիծը ,  
 ըստ վկայութեան պատմագրաց՝ առնուած  
 է Բաղասիւնի , այսինքն Վաղարշապատի մէջ



եղած Ս. Գրիգոր (<sup>1</sup>) եկեղեցւոյն ձեւէն, որ շինել է Ներսէս Գ հայրապետը. շէնքը բոլորովին կարմիր քարէ է, եւ ըստ սովորութեան երեք դուռն ունի. իսկ շինութիւնը Քրիստոսի 1000 թուականին աւարտուել է, ինչպէս կատարագրէ Կիրակոս պատմագիր. «Գագիկ Ա շինեաց զսուրբ Գրիգորն դերա- «հռչակ ի վերայ Ծաղկոցածորոյն, գաղա- «փար առեալ զհոյակապ եկեղեցին Վաղարշա- «պատու, զոր շինեաց հայրապետն Ներսէս. «եւ կատարեցաւ ի հաղար ամի մարմնանալոյ «Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ՆԽԹ

(<sup>1</sup>) Այս Սուրբ Գրիգոր անունով եկեղեցին որ իւր շրջակայ քարոտ տեղերուն համար Առապարի եւս կասուեր, (որ մեր Տրդատ բագաւորը այլակերպուած Լուսաւորչի առաջեան ելաւ), շինուած է է դարուն մեջ՝ Ներսէս Գ կարողիկոսին հրամանաւր. եւ գեղեցիկ ճարտարապետութեանը համար զարմացուցիչ տեսողաց կանուանեն մեր հին պատմիչները: — Ափսոս որ չմնաց այն եկեղեցին իւր առաջին փառաւորութեանը մեջ. վասն զի Հագարացիք իւրեանց արշաւանքին ժամանակ նախանձեցան, ու շինութեան մեծ մասը կործանեցին, որոյ մնացեալն եւս հետ զհետեւ աւերուելով՝ այժմ տեղին միայն կ'ընդունի:



« Թուականին Հայոց » : Այսպէս կալատմէ նաեւ Ստեփանոս Ասողիկ Տարօնեցին . « Յայնմ ժամանակի , յորում ընոյր լրութեամբ ամն Հայոց զարմարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ ' ի վասլի կայսեր յաւուրս , Գաղիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ ' զմեծաշէն եկեղեցին , որ ի Քարուաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ , որ էր փլեալ եւ կործանեալ , կամեցաւ նոյնաձեւ չափով եւ յօրինուածով յարդարել ի քաղաքին Անուոյ հիմնարկեալ ի կուսէ Մաղկոցաձորոյն , ի բարձրաւանդակ տեղւոջն , տարիատենչ տեսողացն , մեծատաշ , վիմարդեան , կոփածոյ վիմօք , մանուածոյ քանդակաւ յօրինեալ , լուսանցոյց պատուհանօք , երրակի դրանց դրանդեօք , սքանչատես տեսլեամբ զմբէ թաւորեալ դունակ դերամբարձ եւ երկնանման գնտին » : (Գիրք Գ , ԳԼ . ԽԷ) :

Գաղկայ ժամանակներէն ' թագաւորական ցեղէ մեռնողներուն մարմինները այս եկեղեցւոյն մէջը թաղուած են :



ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔԸ. — ԲԱԳԱՐԱՏ ԱՐԱԳԱԾՈՒՆԻ.

Քիչ մի հեռուն, այսինքն Առաքելոց եկեղեցիէն դէպի հարաւ գնացած ժամանակիդ կրտսնես Նուսաւորչի վանքը, 1215 թուականին շինուած, եկեղեցին երկայնաձեւ ու բարձրագմբէթ է. իսկ պատերը միւս եկեղեցիներէն աւելի զարդարուն պատկերներով նրկարուած լինելով, նազըշը-ֆիլիսէ կասուի այլազգիներէն: Կերելի թէ այս եկեղեցւոյն համար է Քէր-Փորթրի ասածը թէ «Շատ «զարմանք բերաւ ինձի եկեղեցիներէն մէկը, «որ թէպէտ մեծութեամբ (Անւոյ եկեղեցիներէն) երրորդ կամ չորրորդը կհամարուէր, բայց ճարտարապետութիւնը շատ «ընտիր էր. իւր բարձրակամար ձեղունը գեղեցիկ օրինակ մի էր միւսինն բանուածքի, «եզերքները ազնիւ ետրուրական ոճով, կար-«միր՝ սեւ ու դեղին քարերով զարդարուած. «սիւները եւ ուրիշ զարդերը այնպէս նոր «ու մաքուր էին՝ որ կարծես թէ դեռ նոր «շինուած էր»: — Պ. Մուրալեօվ մեծ դուռ



մի գտել է եկեղեցւոյս մօտ աւերակ կամբջի մի վերայ ձգուած՝ հայերէն արձանագրութեամբ, որոյ թուականը աւերուած էր, կասէ. իսկ գրուածքը այս է եղել. «Ես Բագարատ որդի Զարորայի Արագածունի, կանգնեցի դռուռն որ հանէ ի վանս Սրբոյն Գրիգորի. յամի . . . . »: — Այս գրան արձանագրութենէն կերելի որ Լուսաւորչի եկեղեցին, ինչպէս որ սովորական է արեւելեան եկեղեցեաց, մասնաւոր շրջապատ մի ունեցել է իւր չորս կողմէն, որոյ դուռը, ինչպէս որ յայտնի է յիշատակարանէն, Բագարատ Արագածունիս շինել է իւր անուանն ու հողւոյն փրկութեանը համար:

ԳԵՏՆԱՓՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ. — ԿԱՐՄԻՔ.

Եկեղեցւոյս մօտէն կսկսի զարմանալի կերպով շինուած գետնափոր ճանապարհին դուռը, որ այս ծայրէն մինչեւ իմիւսը, այսինքն գէպ իժարիս վիճակի կողմերը շինուած ելքը՝ երկու ժամ հազիւ կարողացել են երթալու:



Այժմ կամարները փլած են, եւ ինչպէս որ  
 կաւանդեն, կիսեր — կերպեզ կկոչուի ռամիկներէն :  
 Այս գետնափոր ճանապարհը՝ նոր այցելուաց մէկը  
 այսպէս կստորագրէ . « Բաղաքին  
 « արեւելեան կողմի քարայրին մէջ դուռ մի  
 « կայ որ կհանէ գետնի տակ շինուած նեղ  
 « ճանապարհը, սորա յատակը խճով ծած-  
 « կուած է, եւ ճանապարհը երկու ճիւղ կբա-  
 « ժանուի : Մէկ մասը կտարածուի քաղաքին  
 « տակը, որ տեղ տեղ փլած լինելուն համար՝  
 « կարելի չէ իմանալ թէ մինչեւ ուր կեր-  
 « թայ նորա վերջաւորութիւնը . եւ միւս մա-  
 « սը Ախուրեան գետին տակէն անցնելով կել-  
 « նէ մինչեւ հանգիստահայեաց ձորին եզեր-  
 « քը, ուր թէպէտ այժմ վախէն չեն մտներ,  
 « բայց այս կոնտոնի Թամիզին նման Ախու-  
 « րեան Թընէլին ստոյգ լինելը այնու եւս կը-  
 « հաստատուի՝ որ գետին այս կողմը նորա-  
 « շէն աշտարակ մի կայ, ուր Ռուսները ճա-  
 « նապարհը խափանել են, իւրեանց երկրէն  
 « Տաճկի հողը մարդ չփախչելու համար » :



Թէպէտ եւ մեր հին պատմիչներն ու արդի ազգային եւ օտար ճանապարհորդները չեն պատմեր թէ այս գեոնափոր ճանապարհը ո՞վ եւ ինչո՞ւ համար շինել է, բայց մեզի կերեւի թէ այս եւս Գագիկ թագաւորը շինել տուած է. վասն զի նա իւր հեռատեսութեամբը մտածելով Հայաստանի ունեցած անցեալ եւ ապագայ թշնամիներուն վերայ, հաւանական է որ սորա շինութիւնը երեք պատճառաւ որոշած լինի դէպի Թաւնոյ կողմերը, որ Այրարատայ Սարսարայս գաւառին վիճակն է: Առաջինը — եթէ չեմք սխալիր, — որ Պարսիկ թշնամիներուն քաղաքը պաշարած ժամանակին՝ գեոնափոր ճանապարհէն զօրք յուղարկեն, եւ առջեւէն ու ետեւէն ջարդեն. երկրորդը՝ այլազգիներէն յաղթուելու ժամանակ՝ Այրարատայ կողմերը փախչին. եւ երրորդը՝ թշնամեաց երկար ժամանակ քաղաքը պաշարած ատեն՝ ուրիշ տեղերէ հաց բերեն:



ԱՌԱՔԵԼՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ . — ԳԱՆՁԱԿԵՅԻ ՃԳՆԱԻՈՐԸ .

Հուսաւորչի եկեղեցիէն փոքր ինչ հեռու Սրբոց Առաքելոց մեծակառոյց ու ամրաշէն եկեղեցին կերեւի, որոյ վերի ծածքը զարմանալի ճարտարապետութեամբ առանց սիւնի կամարներու վերայ ձգուած է, եւ բոլոր պատերը բազմատեսակ խաչերով, գեղեցիկ քանդակներով ու ճարտար նկարներով զարդարուած : Շինութիւնը այնպէս ամուր է որ միայն թշնամեաց բռնութիւնը՝ բնութենէն աւելի անգութ լինելով, այն նախանձելի փորուածներուն շատ տեղերը աւերել է իւր կործանիչ ձեռքերովը :

Գերմանացի ճանապարհորդին մէկը՝ Կեստներ (Kästner) որ Պ. Բռօսսէէն յառաջ, այսինքն 1850-ին Անուոյ աւերակները դնաց քրններու, իւր ստորագրութեանը մէջ խաչարձանի մի վերայի յիշատակարանը կգրէ, ու « Առաքելոց եկեղեցւոյն պատուհանին մէջ եղել է » կասէ, որ է այսպէս .





ԱՍՏՈՒԱԾԱՀԱՃՈՅ ԵՒ ԸՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ ՄԻԱՅՆԱԿԵԱՑՆ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՈՐ ՋԾԵ (ՅՅ) ԱՄ ՅԱՆԱՊԱՏ ԿԵՑԵԱԼ ԽՈՏԱՃԱՐԱԿ ԵՒ ԱՆՏԵՍ Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԵՆԷ, ԵԿՆ Ի ՔԱՂԱՔՍ Ի ՏՈՒՉՈՒԹԵՆԷ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԱՌ ԺԱՄԱՅՆ ՀՐԱՄԱՆ Ի ՏԵԱՌՆԷ ՀԱՍԵԱԼ ՓՈԽԵՑԱԻ Ի ՄՇՏՆՋԵՆԱԻՈՐ ԿԵԱՆՍ, ԵՒ ԹԱՂԵՑԱԻ ՊԱՆԴԻՏԱԻՈՐ Ի ԳԵՐԵՉՄԱՆՍ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՅ. ԵՒ ԴԻՐՔ ՍՈՒՐԲ ՈՍԿԵՐԱՅ ՆՈՐԱ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՌՆԷ ՅԱՄԵՆԱՅՆ ԱԽՏԻՅ. ԵՒ ԵՍ ՏԷՐ ԳՐԻԳՈՐՍ ՍԱՀՄԱՆԵՑԻ ՋԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԿԻՒՐԱԿԷՆ ԱԻՐՆ ՅԱՆՈՒՆ ՆՈՐԱ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋՔՐԻՍՏՈՍ. ՈՎ ՋՆՄԱՆԷ ՄՈՒՏՔՆ ՅԱԹՈՈՒԷՍ ՀԱՆԷ ԿԱՄ ՈՒՋԵԼ ԻՇԽԷ, ԿԱՅԵՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՋԱՓ ՆՋՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

*Եկեղեցւոյս աջակողմը փառաւոր մատրան մի եւ ուրիշ շինութեանց աւերակներ կան:*

#### ՄԵՍ ՄՋԿԻԹԸ.

*Առաքելոց եկեղեցւոյն մօտ է Անւոյ մեծ մզկիթը, որ երկայն քառակուսի շէնք մի է՝ երկու կարգ երեք երեք սիւներով. սորա ձեղունը տեղ տեղ ուղիղ եւ տեղ տեղ կամարաձեւ մեծամեծ քառակուսի քարերով շինուած է, գեղեցիկ ճարտարութեամբ իրարու մէջ անցուցած ու միակտուր քարի նմանեցուցած:*



մահ յիշատակը իւր վերան ունենալով՝ պարտ  
եւ պատշաճ կհամարիմք մեզ քանի մի խօսք  
եւս սորա վերայ ասել եւ այնպէս վերջ տալ  
մեր երկասիրութեանը :

Անւոյ եւ Աղեքսանդրուպոլ (Կիւմրի) քա-  
ղաքաց մէջտեղուանքը, Կարուց գետոյն եզեր-  
քը, Ղանդունա անունով գիւղին մօտ մեր Բաղ-  
րատունի թագաւորաց ժամանակները, այս-  
ինքն ժ գարու վերջերը շինուած է անուանի  
ՄԱՐՄԱՇԷՆ ՎԱՆՔԸ (¹) : Եկեղեցին դմբեթաւոր  
է, ու առանց սիւնի բարձրացած է ձեղունը .  
եւ շատ հայերէն արձանագիրներ ունի իյի-  
շատակ շինողաց եւ նորոգողաց նորին, զոր  
Պ. ԲԱՍՍԷՒ 1861 թուին Պետերբուրգի մէջ

(¹) Մեր արդի քաջածանօթ պատմագիրներէն մէկը՝ Հ.  
Ղեռնդ Վ. Ալիշանեան, իւր Քաղաքական Աշխարհագրու-  
թեան վերջը դրուած „ՏԵՂԱԳՐՈՒ ԸՍՅՈՅ ՄԵԾԱՅ“ վերնա-  
գրով Հայաստանի ստորագրութեանը մեջ՝ այս եկեղեցւոյն  
Մարմարաշէն անունը՝ իւր շրջակայ արձանագրութեանց՝  
եւ գլխաւորապէս հարաւակողմեան որմոյն վերայի եղած  
Ափխազաց եւ Հայոց Մարիամ բազուհւոյն արձանագրին  
(Տես էջ 55) գօրութեամբը Մարմարաշէն կղնէ, եւ սխալ կա-



հրատարակած նոր վիմատիպ արձանագրութիւններէն առնելով՝ կալատկերացնեմք նաեւ այս տեղ:

Եւ նախ՝ հարաւային գրան վերայ գրտի կողմը, իւր երջանկայիշատակ հիմնադրին գեղեցիկ արձանագիրը գրուած է.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՍ ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ, ԵՒ ԱՆԹԻՊԱՏՐԻԿ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ ԻՇԽԱՆԻ ՀԱՅՈՅ ՄԵԾԱՅ, Ի ՅԵՂԷՆ ՊԱԼԱՏԱՌԻՆԻ ԵՒ Ի ԶԱՐՄԻՅ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՅ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ, ՈՐ ՅԱՂԱԳՍ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅՈՒՍՈՅՆ ՀԻՄՆԱԴՐԵՅԻ ԶՍՈՒՐԲ ԵՒ ԶՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՈՒԽՏՍ ՄԱՐՄԱՇԷՆ, ՍԿՍԵԱԼ Ի ՆԼԷ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՅ (988), ՅԱՒՈՒՐՍ ՍՄԲԱՏԱՅ ՈՐԴԻՈՅ ԱՇՈՏՈՅ ՀԱՅՈՅ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԻՆԶԵԻ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅՈՎԱՆԻՍԻ ՈՐԴԻՈՅ ԳԱԳԱՅ ՀԱՅՈՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՌՆ ԻՄԱՍՏՆՈՅ ՇԻՆՈՂԻ ԵՒ ԽԱՂԱՂԱՐԱՐԻ. ԵՒ Ի ԹՈՒԱԿԱՆՍ ՀԱՅՈՅ ՆԸՂ. ԵՒ ԿԱՏԱՐԵՅԱՔ ՄԵՍ ԶԱՆԻԻ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԾԱԹՈՒՔ ԵՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՇՈՒՇԻԿ ՀԱՅՈՅ ՏԻԿՆԱՅ ՏԻ-

նուանէ առաջին անուեր, պատճառ բերելով միանգամայն թէ եկեղեցին ոչ թէ մարմարէ, այլ տեսակ մի կարմիր քարէ շինուած է. ընդ որ հաւանեցաք եւ մեք. եւ փոխանակ Մարմարաշէն բառին՝ Մարմաշէն (այսինքն Մարեմաշէն) անուան իզորձ զրինք, որոյ արդարեւ ճշդութեան համար անհերքելի ապացոյց են նաեւ միւս յիշատակարանները (էջ 53 — 57), յորս յաճախ կհանդիպին ընթերցողք Մարմաշէն բառին:



Կին . եի եղբարբ իմ վասակ Իշումնսն Իշումն , որ նազասա-  
 կեցաի Ի Թոնիբսն Պատերազմի , եի Աղլթարի՞ շԱՅՈՅ ՄԱՐԶ-  
 ՊԱՆ եի ՄԱՆՈՒԿՆ շԱՄՁԷ . որ էմբ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՄԲ եի ՏՈՂ-  
 ՄԻԻ շԱԻԱՏԱՐԻՄԲ ՏԵՐԱՆՅ ՄԵՐՈՅ . եի նազասակեալ Ի վերսն  
 ՏԱՆՍ շԱՅՈՅ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ եի ԱՐԵԱՄԲ ՄԵՐՈՎ , եի ՈՐԴԻՈՅ  
 ՄԵՐՈՅ եի ԳԱՆՁՈՒՅ ԱՌԱՏՈՒԹԵԱՄԲ , եի ԱՄԵՆԱՅՆ շԱՆՐԻԻԲ  
 ԽՆԴՐԷՄԲ ՁԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ եի ՉՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆ  
 ԵԿԵՂԵՅԵԱՅ . ՇԻՆԵՅԱԲ եի ԱՅԼ ԲԱՁՈՒՄ ԵԿԵՂԵՅԻՍ եի վԱՆՈ-  
 ՐԱՅՍ . ԲԱՅՅ ՁՏԵՂԻ շԱՆԳՍՏԵԱՆՍ ՄԵՐՈՅ ԱՌԱԻԵԼ ՊԱՏՈՒՈՎ  
 ՄԵԾԱՅՈՒՅԱԲ եի ԼԻԱՅՈՒՅԱԲ ԱՄԵՆԱՅՆ ԳՈՅԻԻԲ ԼԵՐԱՄԲԻԲ եի  
 ԴԱՇՏԻԻԲ . ԱԻԱՆԴԵՅԱԲ Ի ՍԱ ԳԵԱԻՂՍ եի ԱԳԱՐԱԿՍ ԳԱՆՁԱ-  
 ԳԻՆՍ , ՁԲԱԳԱՐԱՏԻ ԳԵՂ եի ՁԱԳԱՐԱԿՆ ԻԻՐ , ՁԳՈՒԻՈՆ եի  
 ՁՊՈՐՏԱՆԿՆ , ՁԱՐԱԳԷՃ եի ՁԱՁԱՏԱ , ՁԱՍՄԱՆԷՆ եի ՁԶԵԶԸՆ-  
 ԿԱՅՆ , Ի ՅԱԻՇԱԿԱՆԻ ԱՅԳԻԲ եի ԵՐԵԲ ՁԱՂԱՅ ' եի ԵՐԿՈՒ ՁԱ-  
 ՂԱՅ Ի ԴՈՂՍԻ , ՅԱՇՏԱՐԱԿԻ ' ԱՅԳԻ , Ի ԿԱՐԲՈՅ ԴԱՇՏԻ ' ԱՅԳԻ ,  
 Ի ՍԵՐԿԵԻԼԻ ' ԱՅԳԻ , Ի վՃԱՆ ' ԱՅԳԻ , Ի ՄՐՏԵՆԻ ' ԱՅԳԻ , Ի  
 ՅԱՆԻ ' ՏՆԵՐ եի ԿՂՊԱԿԱՆԻ . եի ՁԱՐԴԱՐԵՅԻ ՁՍԱ ԱՄԵՆԱՅՆ  
 ԿԱԶՄՈՒԹԵԱՄԲ Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԱԻԻՏԵՆԻՅ ՄԵՁ եի ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ,  
 եի ԿԱՐԳԵՅԱԲ Ի ՁԵՌՆ ՍՈՒՐԲ շԱԻՐ ԵՐԵՄԻԱՅ եի որ ՁԿՆԻ  
 ՅԱՁՈՐԴԵՅԱԻ ՍՈՍԹԵՆԷՍ ՆՈՐԻՆ ՈՐԴԻԱՅԵԱԼ . եի ՓՈՒԱՐԷՆ  
 շԱՏՈՒՅՈՒՄՆ ԸՆԿԱԼԵԱԼ ՄԵՐ Ի ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՍՈՒՐԲ ՈՒԽ-  
 ՏԻՍ ՏԱՐԻՆ Ձ ՔԱՌԱՍՈՒՆԻՔ ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՁԵԻ Ի ԳԱԼՈՒՍՏՆ  
 ՔՐԻՍՏՈՍԻ : ԱՐԴ ' ԹԷ ՈՒ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՅ ԱԻԱԳ ՈՐ  
 ՁՄԵՐ ՏՈՒՐՍ ՊԱԿԱՍԵՅՆԷ , ԿԱՄ շԱՅՐ ՈՐ ՁՄԵՐ ԺԱՄՍ ԽԱՓԱ-  
 ՆԷ , ԻՆՔՆ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՅԻ Ի ՔՐԻՍՏՈՍԷ , եի ԴԱՏՈՂ ՆՈՐԱ ՍԱ-  
 ՏԱՆԱՅ ԼԻՅԻ եի ՄԻ՝ ՏԵՍՅԷ ՆԱ ՁՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ . ԻՍԿ ՈՐԲ  
 շԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՆ ՁԱԻԱՆԴՍ ՄԵՐ , ԱԻՐՀՆԵԱԼ ԵՂԻՅԻՆ :



*Յետոյ սորա ճախակողմը, այսինքն հարաւակողմեան որմոյն վերայ՝ ուրիշ արձանագիր մի կայ այսպիսի խօսքերով.*

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՍ ՄԱՐԻԱՄ ԱԲԽԱԶԱՅ ԵՒ ՀԱՅՈՅ ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՒՍՏՐ ՄԵԾԻՆ ՍԵՆԵՔԵՐԻՄԱՅ՝ ԹՈՌԵ ՔԱԳԿԱՅ ՀԱՅՈՅ ԱՐՔԱՅԻ, ՈՐ ԵՏՈՒ ԶՏՈՒՐՍ Ի ՍՈՒՐԲ ԵՒ Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՈՒԽՏՍ ՄԱՐՄԱՇԷՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻՍԻ, ՎԱՍՆ ՔԱԳԿԱՅ ԻՄ ՊԱՊՈՅՆ ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՏԱՅԻՆ ԻՄ ՀԱՆԿԱՆՆ : ԵՒ ՀԱՏՈՒՅՈՒՄՆ ԲԱՐԻ ԸՆԿԱԼԱՅ Ի ՍՐԲՈՅՍ. ԶՍԵԱՆՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԶՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԱԻ ԶՏԱՐԻՆ ՈՂՋՈՅՆ ԿԱՏԱՅԻՆ ԻՄ ՀԱՆԿԱՆՆ՝ ՄԻՆԶԵԻ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ : ԱՐԴ՝ ԵԹԷ ՈՔ Ի ՄԵԾԱՄԵԾԱՅ ԵՒ Ի ՓՈՔՈՒՆՅ Ի ՀԱՅՈՅ ԿԱՄ Ի ՎՐԱՅ ՈՐ ԱՅՍ ԳՐՈՅՍ ՀԱԿԱՌԱԿՍ ԵՒ ԶԻՄ ԳԵԱՒՂՆ ԸԶՏԱՐՈՒՍ Ի ՅԱՅՍ ՈՒԽՏԷՍ ՀԱՆԷ, ԻՆՔՆ ԵԼՅԷ Ի ԿԵՆԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ ԱՐԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ՄԻ՝ ՏԵՍՅԷ ԶՓԱՌՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ : ԻՍԿ ՈՐ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՆ ԶԱՒԱՆԴՍ ՄԵՐ, ԱԻՐՀՆԵԱԼ ԵՂԵՑԻՆ :

*Եկեղեցւոյս արեւելեան ու հարաւային կողմերը՝ ըստ սովորութեան՝ բաղմատեսակ խաչարձաններ կան. իսկ հիւսիսային կողմը այս վերանորոգութեան յիշատակարանս գրքուած է, որ ինչպէս կերեւի Պ. ԲՈՍՍԷԻ*




*վիմատիպ արձանագրութենէն, անաղարտ  
մնացած է մինչեւ ցայսօր.*

Ի ՃԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՊԱՇՏԻՅ ԵՒ ԱՍՏՈՒԹԱՍԻՐԱՅ ՊԱՏՐՈՆԱՅ  
ՄԵՐՈՅ ԱԹԱԲԱԿ ԻԻԱՆԷԻ ԵՒ ՄԱՆԴԱՏՈՐ ԹԱԽՈՒՑԷՍ ՇԱՀԱՆՇԱՀԻ՝  
ՀՐԱՄԱՆԱԻ ՆՈՑԻՆ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳՈՒՄՆ ԵՂԵԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՏԱՃԱ-  
ՐԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱԻՐՍ ԼՈՒՍՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷՒՍ ՄԱՐՄԱՇԻՆՈՅ,  
Ի ՁԵՌՆ ՈՐԴԻՈՅ ԱՊՈՒՂԱՄՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ, ՏԷՐ ԳՐԻԳՈՐՈՅ ԱՐՀԻ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻ ԻՄՈՅ ԽԱՐՓԻՆ ԹՈՌԱՆՅ ՎԱՀՐԱՄԱՅ  
ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՋԱՐՄԻՅ ԵՒ ՇԱՌԱԻՂԱՅ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՇԻ-  
ՆՈՂԻ Ի ՀԻՄԱՆՅ ՄԵԾԱԻ ՏԵՆՉՄԱՄԲ ԵՒ ՅՈՒՍՈՎ, ՋՍԱ ՎԱՍՆ ԲԱԶ-  
ՄԱԳՈՒՄԱՐ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ԵՒ ՊԱՐԳԵԻԵԱԼ ԱՐԴԻԻՆՍ ՅՈՒՆՎՍ ԳԵ-  
ՂԱԻՐԱՅՍ, ՅԱՅԳԵՍՏԱՆՍ, ԿՈՒՂՊԱԿԱՆԻ ԵՒ ՋԱՂԱՅԱՆԻ, ՈՐ ԵՒ  
ՅՈՒՑԱՆԷ ԻԻՐ ԱՐՉԱՆԱԳԻՐՆ ՄԻ ԸՍՏ ՄԻՈՋԷ. ԵՒ ՓԱՐԹԱՄԱՅՈՒ-  
ՑԵԱԼ ԱՄԵՆԱՅՆ ԳՈՅԻԻՔ ԱՌ Ի ԼՆՈՒԼ ԵՒ ԱՌԱԻԵԼՈՒԼ ՋՊԷՏՍ ԿԱ-  
ՐԵԻՈՐՍ ՋԻՐԵԱՆՅ ԵՒ ՋԵԿԱՅ, ԵՒ ՈՒՆԷԻ ՃԱՄԱՆԱԿ ԻՖՐԵԻ ՈՉ  
ՍԱԿԱԻՍ, ՋԻ ԱԻԵՐԵԱԼ ԷՐ ՅԱՆԱԻՐԻՆԱՅ ԵՒ ՋՎԱՆՔՍ ԳԵՂ Ա-  
ՐԱՐԵԱԼ ԵՒ ՋԿԱԹՈՂԻԿԷՍ ԲԵՐԴԱՆՄԱՆ ԱՄՐԱՅՈՒՑԵԱԼ. ԵՒ ԿԱՅՐ  
Ի ԽԱԻԱՐԻ ԵՒ Ի ՍԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ, ՋՐԿԵԱԼ ԱՄԵՆԱՅՆ ԳՈՅԻՅ ՄԻՆ-  
ՉԵԻ ՅԱԻՈՒՐՍ ՅԱՅՍՈՍԻԿ: † ԻՍԿ Ի ՈՀԴ ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ (1225)  
ՔԱԶ ԵՒ ԱՐԻ ՋԱԻՐԱԿԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ԽԱ-  
ՐԻՓՆ ԻՄՈՎ, ԿԱՄԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԽՈՐՀՈՒՐԴ ԲԱՐԻ Ի ՄԻՏ ԱՐԿԵԱԼ Ա-  
ՉԱՏԵԼ, ՋՍԱ Ի ՏՐՏՄՈՒԹԵՆԷ ԵՒ Ի ՋԱԶԻՐ ՄԹՆԱԶԳԱԾՈՒԹԵՆԷ ՀԱ-  
ՍՈՒՑԱՆԵԼ ՆԱԽԻՆ ՓԱՌԱԻՈՐՈՒԹԵԱՆՆ, ՀԱՆԵԱԼ ԱՐՏԱՔՍ ՋՇԻՆԱ-  
ԿԱՆՍՆ, ԵՒ ԵՂԵԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ԿՐԱԻՆԱԻՈ-  
ՐԱՅ ՀԱՃՈՅԱՑԵԼՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ: ՋԱՐԴԱՐԵՅԱՐ ՋՍԱ ՍՊԱՍԻԻՔ ՊԱՅ-  
ԾԱՌԱԶԳԵՍՏԻԻՔ ԵՒ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ ՈՍԿԵՂԷՆ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԷՆ ԵՒ  
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱԻՔ. ԵՒ ԸՆԾԱՅԵՑԱՔ Ի ՍՄԱՅ ՆՈՒԷՐ ԸՉ-



ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԳԵԱԻՂՆ ՉԱԶԱՏԱ, † ԵՒ ՈՐ Ի ՎԱՆԻՑՍ ՀՈՂԻՍ ՎԵՐԱՅ ՇԻՆԵՑԱՔ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ ՏԻՐԱՇԷՆ, ԵՒ Ի ՅԱՅՍԿՈՅՍ ԳԵՏՈՅՆ ՋԱՂԱՅԱՆԻ, ՈՐ ԿԱՆ Ի ԿԱՐՄՆՋԷՆ Ի ՎԱՅՐ ԵՒ Ի ՎԵՐ, ՋԻՈՏ ՋՀՈՂ ԵՒ ՋՈՐ ԻՍԿՋԲԱՆԷՆ ՈՒՆԷԻՆ. ԵՒ Ի ՔԱՂԱՔԻՍ ՉՄԵՐ ՊԱՊԵՆԻ ՀԱՅՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑԻՆ ՉՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԲՈՂՈՐ ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՐԳԵԱՄԲԵՆ, ԵՒ ԵՐԿՈՒ ԱՅԳԻ Ի ՄԱՐՄԵՏԻ, ՈՐ ՆԱԽՆԵԱՅՆ ՄԵՐՈՅ Ի ՄԵՉ ԷՐ ՀԱՍԵԱԼ, ԵՒ ՄԻԱԽՈՐԵՑԱՔ ՋՎԵՐԻ ՎԱՆՔԵՆ ՄԵՍ ՎԱՆԻՑՍ ԻՒՐ ԱՄԵՆԱՅՆ ՍՏԱՑՈՒԱԾՈՎՔ, ԵՒ ԼԻՑԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՄԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԻ: ՄԻՆՉ ԱՅՍ ԱՌ ԱՅՍՉԱՓ ԿԱՏԱՐԵՑԱԻ ԱՌ ԺԱՄԱՅՆ ԳԵՂԵՑԻԿ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ԽԱՐԻՓ ՄԱԳԻՍՏՐՈՍՆ ԳՈՎԵԱԼՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԼԵՉՈՒԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱՅԱԻ Ի ՊԱՏԵՐԱՉՄԻ ԱՆԱԻՐԻՆԱՅ, ԵՒ ՄԻ ՄԻԱՅՆ ՄՆԱՅԻ ԵՍ ԳՐԻԳՈՐ ԵՂԿԵԼԻ, ԵՒ ՋՐԿԵԱԼ Ի ՆՄԱՆԷ՝ ՉՄԱՐՄԻՆ ՆՈՐԱ ԲԵՐԵԱԼ ԹԱՂԵՑԱՔ ԱՌ ԴՐԱՆ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷՒՍ ՄԵՐՉ ԱՌ ՆՇԽԱՐՍ ՀԱՒՈՅՆ ՄԵՐՈՅ ՎԱՀՐԱՄԱՅ ԻՇԽԱՆԻ. ԵՒ ՓՈՒԱՐԷՆ ՀԱՏՈՒՑԻՆ ՍՊԱՍԱԽՈՐՔ ՍՈՐԱ ԸՆԴ ՄԵՐՈՅ ԱՐԴԵԱՆՑՍ ՋՈՐ ԱՐԱՐԱՔ ՋԿԱԹՈՒՂԻԿԷՒՍ ՋԱԻԱԳ ԽՈՐԱՆԻՆ ՊԱՏԱՐԱԳՆ ՅԱՆՈՒՆ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՐԻՓԻՆ, ԿԱՏԱՐԵԼ ԱՄԵՆԱՅՆ ԱԻՐ ԻՍԿՋԲԱՆԷՆ ՏԱՐԻՈՅՆ՝ ՅԱՅՍՄՀԵՏԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ԾԱԳՈՒՄՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ. ՈՐ ՈՔ ԽԱՓԱՆԷ ԿԱՄ ՇՈՐԴԵԼ ՋԱՆԱՅ ՑԸՆՉԻՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ՈՐՈՇԵՍՅԻ Ի ՓԱՌԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՋՐԿԵՍՅԻ Ի ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՅՆ. ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐԵԼՈՅՍ ԱԻՐՀՆԵՍՅԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ Ի ՍՐԲՈՅ ՆՈՐԱ ՅՈԳԻ ԵՒ Ի ՄԱՐՄԻՆ. ԱՄԷՆ:





## Վ Ե Ր Ջ Ա Ք Ա Ն .

Եւ այսպէս, այն բազմամարդ քաղաքը՝ որոյ պայծառութեանն ու բարեկարգութեանը վերայ Յոյները, Պարսիկները, Թուրքերն ու Մողոլները կնախանձէին, այսօր իւր մեծահամբաւ թագաւորներէն, արթուն հովիւներէն ու բարեպաշտ որդիքներէն զրկուած՝ գաղանաց բնակարան դարձել է . ինչպէս որ ցաւով սրտի կասէ Արիատակէս պատմագիրը . «Դանն է ինձ պատմութիւնս եւ բազում «ողբոց արժանի . աշխարհ՝ որ երբեմն իբրեւ զգրախտ տնկախիտ առաջի իւր կանաչագեղ, տերեւալից պտղաբեր, գեղեցկաշուք եւ երջանիկ անցաւորացն ցուցանիւր . . . քանզի այժմ թագաւորն անկեալ «ի պատուոյ իբրեւ զգերի կալանաւոր նստի «ի հեռաբնակ տեղիս : Այսպէս եւ հայրասկտական աթոռն ամայացեալ ի բնակողէն, «ցուցանի տխուր դիմօք իբրեւ զկին նորահարսն մնացեալ յայրիութեան : Հեծելա-



« զօրն անտերունչ շրջեալ, ոմն ի Պարս, ոմն  
 « ի Յոյնս, եւ ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն  
 « աղատաց ելեալ ի հայրենեաց՝ անկեալ ի  
 « ճոխութենէ մռնչեն, ուր եւ են . . . Աւե-  
 « րեցան գաւառք եւ գնացին յաւար տանն  
 « Պարսից եւ Յունաց, եղեն շինանիստ աւանք  
 « բնակութիւն գաղանաց, եւ անդաստանք նո-  
 « ցա յարօտս երէոց: Տունք ցանկալիք բարձ-  
 « րաձեղունք եւ մեծամեծք եղեն բնակութիւն  
 « համբարուաց եւ ուշկապարկաց: Մտին հե-  
 « թանոսք ի աաճարն սուրբ, եւ յաւարի տա-  
 « րան զանդաստանս նորա . . . եւ համարձա-  
 « կեցան յանմտանելիսն, եւ պղծեցին պիղծ  
 « գարշապարօք զսրբութիւն նորա . . . հեղին  
 « զարիւնս ծառայիցն Աստուծոյ որպէս ջուր  
 « . . . յամենայն տեղիս ողբք եւ հառաչանք »  
 եւ այլն: — Ո՛հ, քստմնելի պատմութիւն:  
 Ո՞ր Հայ այս տողերս կարդալով պիտի չը-  
 հառաչէ, եւ ինչ շուարման մէջ պիտի ընկ-  
 նի այն ժամանակ, երբ վայրկեան մի իւր  
 նիւթական կենաց հանապազօրեայ դբաղ-  
 մունքներէն հեռանալով՝ աչքերը դարձուցա-



նէ իւր թշուառ հայրենեաց վերայ ու տես-  
 նէ անձամբ նորա ընդարձակ տարածութեան  
 չորս կողմը փռուած կոյտ կոյտ փլատակնե-  
 րը, ճարտարարուեստ պալատաց, եկեղե-  
 ցեաց եւ վանօրէից աւերակները, ու նոցա  
 ճարտար կերպով քանդակուած եւ աջ ու  
 ձախ ընկած ծանրագին բեկորները . . . .

Ի՛նչ աղետալի սրտով անէծք պիտի կար-  
 դայ այն հայրենավաճառ Կիրակոս Բահանայիև  
 գլխուն, որ իւր անձնական շահուն համար  
 ամբողջ ազգ մի 1034 թուականին Յունաց  
 Միքայէլ կայսեր վաճառեց, որ այն նենգու-  
 թեան պատճառաւն ու իւր արբանեակ Վես  
 Սարգիս անունով անգութ իշխանին ազգակոր-  
 ծան դաւաճանութեամբը՝ վերջապէս 1046  
 թուականին՝ բոլորովին Յունաց Մոնումախոս  
 կայսեր մատնուեցաւ: «Ո՛վ դառն վաճառուն  
 «այնորիկ — կասէ կաստիւլերացին ողբալով,  
 «— քանի արեանց զանձն պարտական կացոյց.  
 «քանի եկեղեցիք ի ձեռն վաճառուն այնորիկ  
 «աւերեցան. քանի դաւառք անմարդ յա-  
 «մայի դարձան. քանի մեծանիստ աւանք



« մարդաթափի ի բնակչաց եղեն . . . Այս վա-  
 « ճառ անմարդագոյն գոլ թուի ինձ, քան  
 « զՅուդային . քանզի անդ թէպէտ վաճառողն  
 « ընդ պարսաւանօք, այլ վաճառն գինք եղեւ  
 « փրկութեան ամենայն աշխարհի . . . իսկ աստ  
 « վաճառողն յոյժ ապառուժն եւ տմարդի, զի  
 « այսքան չարեաց զանձն պարտական կացոյց .  
 « զի այդի զոր տնկեաց Տէր, եւ մշակեաց  
 « Լուսաւորիչն մեր իւրով հնդետասանամեայ  
 « քրտնալիր աշխատութեամբն, նա քակեաց  
 « զցանկ նորա եւ կործանեաց զաշտարակս  
 « նորա եւ արար զնա կոխան անցաւորաց .  
 « մինչեւ ապականեաց զնա խող անտառի, եւ  
 « կլինձ վայրի ճարակեցաւ ի նմա » եւ այլն :

Ինչ սրտաբեկ զգացմունք պիտի ունենայ  
 իւր այն ժամանակի համազգեացը քաշած  
 թշուառութեանցը վերայ, երբ այն մատնու-  
 թիւններէն յետոյ եւս 193 տարուան մէջ,  
 այսինքն 1046-էն մինչեւ 1259 թուականը՝  
 երբեմն Յունաց, երբեմն Պարսից, երբեմն  
 Թաթարաց, երբեմն Վրացաց եւ երբեմն այ-  
 լոց թշնամեաց Բագրատունեաց մայրաքաղա-





քին վերայ յարձակիլը տեսնէ, որ ամէն անգամ ժողովրդոց գոյքը յափշտակած՝ եւ մեծամեծ աւարներով իւրեանց տեղերը դարձած են . . . :

Ո՛հ, յիրաւի, ծանրալուր ճշմարտութիւն, որ սակայն սկէտք է ամենայն հայրենասէր Հայ կարգայ ու հառաչէ: Բայց ըստ մեզ, սրբան եւ հառաչեմք ու ողբամք այն անցելոցը համար, ուրիշ կերպով օգուտ չեմք կարող տալ, բացի մեր ժամանակի իրական պահանջմունքներուն դործադրութենէն:

Ի՞նչ է ժամանակիս իրական պահանջմունքները .

— Մեր ազգին համար ժամանակիս իրական պահանջմունքներն են նախ՝ դիտել այն բազմադարեան սարսափելի աղետից պատճառները, եւ ապա նայելով մեր շրջակայ զարգացեալ ազգաց յառաջադիմութեանը, ճանաչել մեր պակասութիւնը, եւ սոսկալով ետ քաշուիլ այն աղետից պատճառներէն, որոց գլուխն էր Եսակասութիւն կամ անկասարակութիւն հասկերձ անմտութեամբ . . . :



Պատմութեան նայելով, եւ մեր արդի վիճակէն տեսնելով, նոյն իսկ մեր աշխարհին ծաղկեալ ժամանակներն անգամ գրեթէ ոչինչ խելացի նպատակ ու հեռատես խորհուրդներ չեն եղած աղգային ներկայ եւ ապագայ վիճակին յառաջագիմութեանն ու բարօրութեանը համար: Յիրաւի, նոքա վանորայք, եկեղեցիներ, քաղաքներ, աշտարակներ, մարտիոցներ շատ շինեցին, եւ աշխարհակալութիւններ եւս արին, բայց մի եւ նոյն ժամանակին դեռ իւրեանց ժողովրդոցը պէտք եղածին չափ կարգ՝ կանոն չըտուած, այլոց ետեւէն կրննէին, որոյ վախճանը երկուսէն եւս զրկուին էր, ինչպէս որ տեսանք:

Այն ժամանակի թագաւորաց շատերը իւրեանց պարծանքը այս կամ այն տէրութեան հետ կռուին ու նոցանէ քանի մի դերի խելը կհամարէին, որոց համար իւրեանց չորս կողմը պատող շողոքորթ պաշտօնատէրներէն մեծամեծ գովասանքներ կլսէին անմիտ անճնահաճութեամբ, ուստի եւ աւելի



բորբոքելով՝ կռիւը շուտով պատերազմի կը-  
 փոխուէր, եւ պատերազմը՝ աւերման, կոր-  
 ծանման, սատակման . . . Ո՛ւր էր թէ Մեն-  
 տոր մի ելնէր այն ժամանակները, ու կրե-  
 տացւոց Իդոսէնէս թագաւորին յանդիմա-  
 նութեանը նման խրատներով կշտամբէր նա-  
 եւ մերոնց անձնահաճութիւնն ու կարճատե-  
 սութիւնը՝ ասելով. « Թագաւոր, այն կռիւ-  
 « ներուզ համար որ այնչափ գովասանքներ  
 « լսեցիր, պարտաւելու միայն ես արժանի .  
 « վասն զի գրսէն այնքան թշնամիներ ունէիր  
 « որ դեռ պէտք եղածին չափ չհաստատուած՝  
 « թագաւորութեանդ կործանումը կսպառ-  
 « նային . . . Ո՛վ Իդոսէնէս, ամենէն առաջ  
 « հարկաւոր էր քեզ երկար խաղաղութիւն,  
 « որպէս զի ժողովուրդդ աճէր ու բազմա-  
 « նար. եւ երկրագործութենէն ու ժողովրդ-  
 « դոցդ օգտակար օրէնքներ դնելէն զատ՝  
 « ուրիշ բան պէտք չէր մտածէիր: Բայց սը-  
 « նոտի փառասիրութիւնը այնպէս մղեց զքեզ՝  
 « որ մինչեւ անդունդին բերանը տարաւ. եւ  
 « աւելի մեծ երեւելու ջանքով՝ քիչ մնաց որ



« ունեցած չափաւոր մեծութիւնդ եւս պիտի  
 « կործանէիր : Փութան արդ այդ սխալմունքդ  
 « ուղղելու, դադարեցուր մեծագործութիւն-  
 « ներդ, հրաժարէ այն ունայն պերճութե-  
 « նէդ որ նորաշէն քաղաքիդ կործանմանը  
 « պատճառ կարող է լինել. թող որ ժողո-  
 « վուրդդ շունչ առնու. առատութիւն պատ-  
 « րաստէ նոցա . . . Արդաւանդ երկիր մի ու-  
 « նեցիր՝ թէ եւ շատ ընդարձակ չլինի, բնա-  
 « կեցուր այն տեղ անթիւ աշխատասէրներ ու  
 « կիրթ մարդիկ. ինքդ զքեզ սիրել տուր  
 « իւրեանց, եւ ամենայն աշխարհակալներէն  
 « ու կործանիչ թագաւորութիւններէն աւե-  
 « լի հզօր, աւելի երջանիկ եւ աւելի փառա-  
 « ւորեալ կլինիս » եւ այլն :

Բայց միթէ չեղան եւ իՀայաստան Մեն-  
 տորին հաւասար փորձ ու կիրթ Հայ մի .

— Ահա Մեծն Ներսէս, որ անկարգութիւն  
 մի յանդիմանելու համար մեծ եւ փոքր չէր  
 նայեր. եւ ոչինչ ընդհատ կրեալի Մենտո-  
 րական կարգադրութիւններէն՝ Հայաստանի  
 մէջ այնքան բարեկարգութիւններ արաւ, ե-



կեղեցական հարկաւոր եւ օգտակար կարգեր՝  
կանոններ հաստատեց, ամէն տեղ աղքատա-  
նոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ  
հիւրանոցներ շինեց, դպրոցներ ու վարժա-  
տուններ կանգնեց, վանքերուն թիւը շատ-  
ցուց՝ բարեկարգեց: Չխնայելով իւր ծերու-  
թեան հասակին, մինչեւ կոստանդնուպօլիս  
դնաց, ուր տարիներով նեղութեանց համ-  
բերելով՝ վաղեւ կայսեր մեր Պապ թագաւոր-  
ին դէմ հայաստան յուղարկուած զօրքը յետ  
դարձուց՝ խաղաղութեան հրեշտակի մի պէս  
հաշտութիւն խօսելով: Միայն թէ այս տար-  
բերութիւնս կար այն երկու ախտամուլ թա-  
գաւորաց մէջ, որ Իգումենէօ իւր յանցանքը  
ճանաչելով՝ ուղղութեան հետեւեցաւ, եւ  
ժողովրդաց վիճակը շտկեց. իսկ Պապ թագա-  
ւորը ինքնաճանաչութեան զգացմունք չունե-  
նալով, եւ յամառութեամբ վարակուած գրա-  
նուելով, փոխանակ Մեծին ներսիսի յանդի-  
մանութիւնը աստուածային պատգամի պէս  
ընդունելու, իւր չար ախտերը անսանձ հա-  
մարձակութեամբ իգործ դնելու համար՝ դե-



զակուր մահուամբ վերուց աշխարհէս այն  
 Հայաստանի մի միայն արեգակը, որոյ վեր-  
 ջին զարհուրելի անէծքէն <sup>(1)</sup> գողցես յա-  
 ւիտենական դատապարտութեան տակ մնաց  
 մեր ազգը :

Վերջացընեմք խօսքերնիս՝ ասելով որ թէ  
 յիրաւի, մեր ազգին համար ժամանակիս  
 իրական պահանջմունքներն են ճանաչել մեր  
 պակասութիւնը ու խորշիլ այն աղետից սկըզ-  
 բունքներէն, ապա պէտք է աշխատիմք ձեռք  
 բերելու սորա մի միայն դեղը, որ է ու-  
 սումնական կրթութիւն հանդերձ բարոյական  
 դաստիարակութեամբ, յորմէ կծագին սէր,  
 միաբանութիւն, առաքինութիւն, եւ այն ա-  
 մենայն բարեշինութեան մասունք, որովք  
 կկառավարուին աշխարհիս մեծամեծ ու զար-

(1) „Մի պակասեցե լուծ ծառայութեան ի պարանոցե  
 ձերմե հանապազ . զվայելուչ աշխարհ ձեր՝ առաջի ձեր  
 օտարք կերիցեն, եւ հարկ տան որդիք որդւոց ձերոց՝ ան-  
 օրինաց “ :



դացեալ ազգերը : Եւ եթէ կուզեմք մեր նախ-  
 նեացը յիշատակին արժանաւոր, եւ մեր ա-  
 պագայիցը համար անմոռանալի անուն թո-  
 դուլ աշխարհիս վերայ՝ սորա հասնելուն աշ-  
 խատիմք, եւ դայս գնեմք մեր գործոցը մի  
 միայն նպատակ :



LITH. BY H. W. B. 1850



ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՅ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԱՆԻՈՅ



1. Յառաջաբանական գիտելիք .....	5
2. Անույ դիրքը .....	15
3. Անույ պարիսպներն ու դռները .....	15
4. Անույ տեսարանը .....	18
5. Կարուղիկէ եկեղեցին .....	—
6. Բիւրեղեայ ջահը. — Կարուղ. մեծ խաչը ....	20
7. Կառուցող Կարուղ. — Արձանագրութիւնք .	25
8. Հռիփսիմեանց եկեղ. — Սարգիս Կարուղիկոս.	27
9. Ամենափրկիչ եկեղ. եւ նորա հիմնադիրը ....	28
10. Միջնաբերդը եւ Բագրատունեաց պալատը ....	51
11. Անույ խաչարձանները. — Ալազան գէտը....	55
12. Աւերակ պալատան մնացորդը .....	56
13. Արժուներաց եկեղեցին .....	57
14. Սուրբ Գրիգոր եկեղեցին .....	—
15. Լուսաւորչի վ. — Բագարատ Արագածունի ..	40
16. Գեղնափոր ճանապարհը. — Կարծիք .....	41
17. Առաքելոց եկեղ. — Գանձակեցի ճգնաւորը..	44



18. Մեծ մզկիթը .....	45
19. Ուրանկիւնի առսարակը .....	46
20. Քաղանիք .....	47
21. Անուոյ շուկայն ու կրկնայարկ կրպակները...	49
22. Քաղաքին մեջի գուբերը .....	—
23. Անուոյ Յունաց եկեղեցին .....	50
24. Մարմառէն վանքը. — Արձանագրութիւնք....	51
25. Վերջաբան .....	58—68





















